№ 5—6 (217) XXI ՏԱՐԻ ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ 1911

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՐՇԱԻԸ ԵՒ ԹԻՒՐՔԻՈՅ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

II

Ինչո՞վ բացատրել տեւտօնների այդ մոլեգին արշաւանքը, այդ բուռն ու տենդային հետաքրքրութիւնը պատմական, „արևելագիտական" խնդիրներով, գաղթականութեան ու „խաղաղ թափանցումի" այդ հոյակապ ծրագիրները մի աշխարհում—փոքր Ասիա—որի նկատմամբ Բիսմարկի հայրենիքը մինչև վերջին ժամանակները ցոյց է տուել միայն պաղ ու արհամարհոտ անտարբերութիւն։

Վաղուց չէ, որ երկաթէ կանցլերը արտասանում էր—հայկական, կրէտական արիւնահեղ անցքերի դիմաց—իր հռչակաւոր խօսքը, լի վայրագ ու տմարդի ցինիզմով, որ միանգամայն յատկանշում է ամբողջ գերման քաղաքականութիւնը, յընթացս տասնեակ տարիների, հանդէպ ստրուկ ու մարտնչող ժողովուրդների... „Ամբողջ արևելեան խնդիրը մեր պօմերանեան մի գինուորի ոսկորը չ'արժէ"։

Բացարձակ անշահախնդրութիւն այն բոլոր վէճերի, ընդհարումների նկատմամբ, որ փոթորկում էին օսմանեան թատերաբեմը, պարբերաբար յօշոտելով հիւանդ մարդու օրգանիզմը, պարբերաբար մատուցանելով յաղթանակի դափնիները այս կամ այն աշխարհակալող ոսոխին, մերթ Անգլիային, մերթ Ֆրանսիային, Աւստրիային, Ռուսաստանին։

Եւ այժմ ահա կատարեալ—դիմադարձութիւն։ Թագաւորի, կապիտալիստների, վաճառականների, ինժեներների և գիտնական-հետազօտողների մի խելայեղ վազք դէպի Պօլիս, Միջագետք, դէպի Փոքր Ասիոյ լեռնադաշար։

Առեղծուածի բանալին պիտի փնտրել գլխաւորապէս անտեսական էւոլիւցիայի և ազգաբնակչական յորձանքների մէջ, որոնց հետևանքը չէին կարող նախատեսնել անգամ սրատես Բիսմարկները։

Ուրիշ տեսակ մտահոգութիւններ էին զբաղեցնում Գերմանիային, սրանից տասնեակ տարիներ առաջ։ Այն ժամանակ նա չունէր ոչ ցանկութիւն, ոչ հնարաւորութիւն՝ նետուելու գաղութային ընդարձակ քաղաքականութեան հոսանքի մէջ. նրա միակ հոգսն էր՝ ամրապնդուել Եւրոպայում, ծառանալ դրացիների դէմ, որպէս հզօր, անպարտելի մի պատնէշ, իր հսկայ ու կարգապահ լեգէօններով, դառնալ առաջին զինուորական պետութիւնը, հրամանատար ու իրաւարար ամբողջ ցամաքի վրայ։

Եւ եղաւ։ Ֆրանս-պրուսական պատերազմը մէկէն ի մէկ իրագործեց գերմանական բուրժուազիայի տենչանքները։ Դարձնեց ազգային միութիւնը Սեդանի մարտադաշտում, հնչեց միացեալ հայրենիքում շովինիզմի խրոխտ ու ամբարտաւան յանկերգը՝ „Գերմանիան ամենից վե՛ր, ամենից բա՛ձր"... Կնքեց երեքպետեան դաշնակցութիւնը Գերմանիայի նախագահութեամբ և կուռ ու ահեղ բարձրացաւ միլիտարիզմի անկշտում Մողոքը, որ նոյն Բիսմարկի բերնով ծանուցանում էր. „Wir Deutsche fürchten Gott und sonst Nichts auf der Welt!". „Մենք գերմանացիներս վախ ունինք միայն Աստուծուց, ուրիշ ոչ ոքից այս աշխարհում"։

Ժամանակի անիւը սահեց այնուհետև, փոփոխելով հետզհետէ այդ գոռոզ, ամբարտաւան մտայնութիւնը։ Գերմանիան տեսաւ, համոզուեց, որ կայ նաև երկրաւոր աստուածը, որի հանդէպ ակամայ համակւում էր երկիւղով։

Մեծ Բրիտանիան էր, իր համաստիւռ, աշխարհածաւալ տիրապետութեամբ։

Եւ որքան աւելի էր աճում, զօրանում նորակազմ պետութիւնը, որքան աւելի էր առաջադիմում նրա տնտեսական կեանքը, առևտուրը, մեքենային ճարտարարուեստը,—այնքան աւելի և աւելի էր շեշտւում այդ երկիւղը „Բրիտանական Առիւծի" դիմաց։

Ընդամենը 2—3 տասնամեակներում խոշոր մեքենային արդիւնաբերութիւնը Գերմանիոյ մէջ ահագին թռիչքներ գործեց։ Կապիտալիստական ժամանակակից արդիւնաբերութիւնը պէտք ունի ընդարձակ շուկաների։ Հայրենիքի սահմանները անձուկ են նրա համար և նա ձգտում է դուրս նետուել ու տարածուել լայնալայն հորիզոններում։ Այդ երևոյթը դիտուել էր առաջին արդիւնաբերական երկրներում — Անգլիայում, Ֆրանսիայում, Հոլլանդիայում—որոնք և վաղաժամ պարզել էին գաղութային քաղաքականութեան տիեզերանուաճ դրօշը։

Գերմանական հանճարը տնտեսական արդիւնաբերութեան մէջ գերազանցեց հարևաններին, գերազանցեց և ֆրանսիականին։ Ոչ մի տեղ, անգամ Անգլիայում, չէր եղել համեմատաբար այնքան կարճ ժամանակամիջոցում այնքան վիթխարի առաջխաղացութիւն տեխնիկի, արտադրութեան ու առևտրի ասպարէզում։ Այդ յորդացող գանձերի համար անհրաժեշտ էին արտահանութեան վայրեր։

Այլ հանգամանք։ Տնտեսական առաջխաղացութեան հետ զուգընթացաբար՝ հսկայօրէն աճում էր և գերմանական ազգաբնակութիւնը։ Ընդամենը 40—50 տարի առաջ, Ֆրանսիայի և Գերմանիայի ազգաբնակութիւնները հաւասար էին իրենց թւով։ Իսկ այսօր պատկերը հիմնականապէս փոխւել է... և փոխւել է՝ ի մեծ դժբախտութիւն ֆրանսիացիների, որոնք շարունակ ողբում են իրենց թւական տկարութիւնը և ապարդիւն ճիգեր են անում դարմանելու։ Արդարև, մինչդեռ Գերմանիան հաշւում է ներկայումս մօտ 70 միլիոն ազգաբնակութիւն, ֆրանսիացիների թիւը հազիւ է հասնում 40 միլիոնի։

Մի կողմից, ուրեմն, տնտեսական զարգացման սրարշաւ ընթացքը, միւս կողմից ազգաբնակութեան յարաճուն գրոհը մղում էին գերմանացիներին դէպի դուրս, դէպի հեռաւոր նուաճումներ։ Եւ ահա գաղութային քաղաքականութեան պահանջը Գերմանիայում դարձաւ օրեցօր զօրեղ, հրամայական։ Նեռւեցին աջ և ահեակ։ Եւ ամեն տեղ, գրեթէ ամեն տեղ, տևտօնի շարժուն, նախաձեռնող ու կորովի ձեռքերը բախւեցին անյաղթելի խոչընդոտների. գրեթէ ամեն տեղ, երկրագնդի բոլոր ծայրերում նա տեսաւ բրիտանական առիւծի թաթը, ամուր կառչած լայնարձակ ու արգաւանդ գաղթավայրերի։

Ահեղ մրցման ուրուականը, ապագայ խօլ ըմբշամարտի հեռապատկերը նկարւում էր առաջին իսկ քայլերից... Վիլհելմ II-ի կառավարութիւնը զգում էր այդ և այնուամենայնիւ առաջ նետւեց համարձակ, իր ուժի և դեռ թարմ, աշխարհադղորդ յաղթանակների գիտակցութեամբ։

Եւ յօրինւեց նշանաբանը, մարտախօսքը — Weltpolitik! Աշխարհածաւալ քաղաքականութիւն... Բախտաւոր նշանաբան եղաւ։ Բառը տարածւեց, հիպնօզի պէս գերեց ուղեղները և այսօր նա, կարելի է ասել, իւրաքանչիւր գերմանացու շրթների վրայ է։ Վիլհելմ II յօրինեց մի այլ ֆօրմուլ, որ նոյնպէս խանդավառութեամբ ընդունւեց գերմանական իւնկերների ու բուրժուազիայի կողմից. „Մեր ապագան ջրերի վրայ է“ — ասաց նա մի տաս տարի սրանից առաջ, մի հանդիսաւոր առիթով։

Եւ այդ բառերն ու ֆօրմուլները մի մի ձեռնոց էին, մի մի գոռոզ ու յանդուգն մարտահրաւէր, ուղղւած „ծովերի միահեծան թագուհուն“ — Մեծ Բրիտանիային։

***

Տեղ կա՞յ արդեօք երկրագնդի վրայ մի ուրիշ Անգլիայի համար... Եթէ այո — ապա այդ երկրորդ Անգլիան կարող է լինել — միմիայն Գերմանիան։ Եթէ ոչ — ապա նոր բարձրացող երկիրը իրաւունք ունի պահանջելու „իր տեղը արեգակի տակ“... Նոյնիսկ ի վնաս Անգլիայի, ի հաշիւ նրա համաշխարհային տիրապետութեան։ Ահա սոսկալի դիլեմմը։ Այդպէս մտածեցին և այդպէս շարունակում են մտածել այսօր Գերմանիայի բաղաքագէտները։ Ինչո՞ւ աշխարհը պէտք է պատկանի միմիայն Անգլիային։ Ինչո՞ւ Մօլտկէի զրահապատ հայրենիքը չի կարող դառնալ գաղութային խոշոր պետութիւն, Kolonialmacht. Ինչո՞ւ նա չի կարող միջամտել իբրև իրաւարար այն բոլոր միջազգային կնճիռների մէջ, ուր աշխարհի բախտն է տնօրինւում։ Բայց մանաւանդ, ինչո՞ւ Գերմանիան ձայն չունենայ — ծանրակշիռ, տիրապետող ձայն — այն պարագաներում, երբ այս կամ այն „ազատ“, դեռ „չը նուաճուած“ երկրամասի ճակատագիրն է դարձնում... օրինակ, Չինաստանի, Թուրքիայի, Մարօկկի...

Ահա մի շարք „ինչու“-ներ, որ բացատրում են նոյնպիսի մի շարք ժամանակակից կնճիռներ, բացատրում են հռչակաւոր „գրոհը դէպի Արևելք“, լոյս են սփռում Գերմանիայի մարօկկեան բաղաքականութեան վրայ, բացատրում են, վերջապէս կայզէրի պատմական ուղևորութիւնը դէպի Պոլիս ու Պաղեստին, նրա ստոր ողջագուրումները Կարմիր Գազանի հետ, նրա զազիր ընթացքը հայ-կրետական-մակեդոնական արիւնաներկ խնդիրների հանդէպ, և նրա ձեռքով նուիրագործուած գերմանական արշաւը դէպի Ցաւրոս ու Բաղդադ, մինչև Պարսից ծոց։ Այդ նոյն „ինչու“-ների մէջ է պատճառը գերմանական նորագոյն ու անսպասելի միջամտութեան՝ Մարօկկօի գործերի մէջ։ Բաղդադ, Կիաուչաու, Ագադիր — անհրաժեշտ օղակներ են միևնոյն տրամաբանական շղթայի, հեռևողականօրէն զարգացող քաղաքական դրամայի։

Այդ դրամայի կարճ անունն է — Անգլո-գերմանական մրցակցութիւն։

Նա մեծագոյն „իրողութիւնն“ է ժամանակակից դիւանագիտութեան։ Նա առանցքն է ամբողջ համաշխարհային քաղաքականութեան։ Մի ժամանակ քաղաքական հրապարակի վրայ տիրապետող իրողութիւններն էին՝ ֆրանս-գերմանական հակամարտութիւն, Էլզաս-Լոտարինգիա և Արևելեան խնդիրը կամ ցարիզմի աւանդական „սլացքը դէպի Պոլիս“։ Այսօր նրանք, միջազգային այդ արիւնոտ կնճիռները, յետ են մղւել նսեմացել են նոր կենտրոնական իրողութեան առջև — անգլո-գերման հակամարտութեան՝ որ իշխում է տիրականօրէն համաշխարհային արէօպագի վրայ, որ գնալով, ընդունում է միշտ աւելի սուր կերպարանք, որ սպառնում է հին աշխարհին արհաւրալի փոթորիկներ։ Հին, կլասսիկ „ալլիանսներն“ անգամ, երկպետեան,

երեքպետեան նիզակակցութիւնները կրում են այդ տիրական երևոյթի ուղղակի կամ անուղղակի ազդեցութիւնը։ Եւրոպական համաստեղութեան մէջ տեղի են ունենում որոշ փոփոխութիւններ, առաջ են գալիս նորանոր „համաձայնութիւններ“, որոնք չունենալով հանդերձ նիզակակցութեան ուժն ու բնոյթը, որոշ յեղաշրջումն են մտցնում միջպետական յարաբերութիւնների մէջ. Ֆրանսիան և Ռուսաստանը համաձայնութիւն են կռում Անգլիայի հետ, որ արդէն հրաժարիմք է ասում „վեհապանծ մեկուսացման“ իր վաղեմի դաւանանքին. և երկու դաշնակից պետութիւնների այդ մերձեցումը Անգլիայի հետ պարզապէս թելադրւած է նոյն գերմանական գրոհի դէմ թումբ կանգնելու մտահոգութեամբ, — Ֆրանսիան՝ Մարոկկում, Ռուսաստանը՝ Արևելքում։ Իտալիան միշտ աւելի և աւելի պաղում է դէպի իր երկու դաշնակիցները և պարբերաբար շեշտելով հանդերձ նիզակակցութեան իր պարտաւորութիւնները, կապւում է մտերմական կապերով Ֆրանսիայի հետ, մինչդեռ երկու միւս դաշնակիցները — Աւստրիա, Գերմանիա —ընթանում են թև թևի, եղբայրաբար, պանգերմանիզմի դրօշակի տակ, փոխադարձաբար աջակցելով ու քաջալերելով մահմեդական Արևելքում։ „Գերմանական վտանգը“ պիտի մղէ՞ արդեօք հեռու, անյայտ ապագայում, Անգլիային և Իտալիային՝ յարելու երկպետեան դաշնակցութեան և ընդհանուր ուժերով խաթարելու նոր Կոլոսի ընթացքը,—դա մի հարց է, որ ցցւում է քաղաքական վերիվայրումներին իւրաքանչիւր շատ թէ քիչ ուշադիր հետևողի առջև...

Առ այժմ Անգլիան դեռ ևս հին, պատկառելի տիտանն է, որ իր հսկայ ու բազմաթիւ զրահանաւերով ընդունակ է չափւելու մի քանի ցամաքային պետութիւնների հետ։ Սակայն անցել է հին, պայծառ ու աներկիւղ անդորրութիւնը՝ նաև Անգլիայում և վաղուց արդէն — 15 տարուց ի վեր — բրիտանական մամուլը և հանրային կարծիքը հնչեցնում են ահազանգը „գերմանական վտանգի“ դէմ, ազդարարում են գերմանական ապրանքների ահաւոր մրցումը և թելադրում են արթուն հսկել թշնամու վրայ, աճեցնել նաւատորմը, մտցնել պարտադիր զինուորական ծառայութիւն և այլն։

***

Հեգեմոնիա — Եւրոպայում (ցամաքի վրայ), հեգեմոնիա—ամբողջ աշխարհում... Առաջինը իրագործւած է. մնում է իրագործել վերջինը։ Եւ որովհետև Լոնդոնը հազարագլխեան վիշապի պէս ցանցապատել է երկրագունդը, ուստի .. պէտք է ելնել մ ե ն ա մ ա ր տ ի։ Այդպէս է ահաւոր հրամայականը, որ ծառացել է Գերմանիայի առջև։ Խոչընդոտները անհաշիւ են։ 50—60 տարիներ առաջ համեմատաբար դիւրին էր մի բուռն զօրքով անել ընդարձակ նւաճումներ։ Անգլիայի հանդէպ կանգնած էին, այն հեռաւոր գաղութներում, անկարգ, անկազմակերպ խուժաններ, որ դիւրութեամբ նահանջում էին ու համակերպում, մի քանի յուսահատ թռիչքներից յետոյ։ Պատկերը փոխւել է այսօր։ Ամենայետամնաց երկիրներն անգամ իւրացրել են քաղաքակրթութեան զէնքերը և, վերջապէս, „նոր աշխարհակալողը“, ուր որ էլ երթայ, պիտի տեսնէ իր առջև նոյն ահարկու ոսոխին, աշխարհի ամենամեծ նաւատորմի հրամանատարին։ Չինաստան, Թիւրքիա, Մարոկկ — ամեն տեղ սաւառնում է այդ հսկայ ուժի ուրուականը։

Ի՞նչ անել. ինչպէ՞ս անօրինել „մենամարտը“։ Գերմանիան ապացուցել է, որ բ ռ ն ի ո ւ ժ ի պաշտամունքի հետ կարող է տալ աշխարհին և ամենաճարպիկ դիւանագիտական յաղցումներ։ Պատերազմը, արիւնահեղ բաղխումները ներկայ դէպքում չեն մտնում նրա հաշուի մէջ։ Եւ դիւրին էլ չէ ձեռնարկել պատերազմների, ունենալով մէջքի վրայ չ ո ր ս մ ի լ ի օ ն սոցիալիստներ։ Հաշիւը շատ աւելի բանաւոր է, գործնական։ *Weltpolitik*-ի ճանապարհները պիտի հարթւին խաղաղ, տնտեսական գործունէութեան մեթոդով։ Դիւրին է այդպէս — անուղղակի ճանապարհով — զինաթափ անել հակառակորդներին և առաջ տանել միաժամանակ „թափանցումի“ ու նւաճումի ծրագիրները։ Առանց խոշոր ցնցումների, բայց հաստատուն ու անյողդողդ՝ Գերմանիան կը ձգտէ իր աշխարհածաւալ տիրապետութեան։ Նա կը ձգտէ ստեղծել իրեն համար մի Եգիպտոս Միջագետքում, մի Հնդկաստան՝ թերևս հեռու Արևելքում։ Նոր Եգիպտոսի խարիսխները արդէն իսկ ձգւած են վարպետ ձեռքով. դա այն հսկայ ձեռնարկն է, որ կոչւում է „Բաղդադի երկաթուղի“ և որի շուրջը ախորժակները ու դաւերը մղում են այսօր մի կատաղալ համաշխարհային պատերազմ.. Որովհետև այդ ձեռնարկի ակներև նպատակն է՝ տիրանալ Հնդկաստանի մեծագոյն և լաւագոյն ճանապարհին։

Խաղաղ, հանդարտիկ ու մեթոդիկ աշխատանքով՝ պանգերմանիզմը պիտի քանդէ աստիճանաբար պանբրիտանիզմի հիմքերը, պիտի հասնէ մինչև բրիտանական գահի փառահեղ պատւանդանը — Հնդկաստան։ „Գերմանիան ոչ ոքի չի գրգռում, նա միայն ինքնապաշտպանութեան դիրքեր է պատրաստում իրեն համար... ապագայ բրիտանական յարձակումների հանդէպ“... Այդպէս են յայտարարում գերման քաղաքագէտները։ Եւ դոքտոր Թորբախ սիրով արձագանք է տալիս այդ փարիսեցիական բարբաջանքներին, իր յայտնի աշխատութեան մէջ, Բաղդադի երկաթուղու մասին, ուր գրում է.

„Կայ միայն մէկ հնարաւորութիւն Գերմանիայի համար՝ դիմագրաւելու ա ն գ լ ի ա կ ա ն մ ի յ ա ր ձ ա կ ո ղ ա կ ա ն պ ա տ ե ր ա զ մ ի,—դա Թիւրքիոյ ուժեղացումն է։ Եւրոպայից՝ Անգլիային կարելի է միայն մէկ տեղ ցամաքային ճակատամարտ տալ և ծանրապէս վիրա-

ւորել, այն է՝ Եգիպտոսում։ Եգիպտոսը կորցնելով, Անգլիան պիտի կորցնէ ոչ միայն իր տիրապետութիւնը Սուեզեան ջրանցքի վրայ և իր հաղորդակցութիւնը Հնդկաստանի ու արևելեան Ասիայի հետ, այլ և հաւանականօրէն իր հողերը կենտրոնական ու արևելեան Ասիայում։ Եթէ Եգիպտոսին տիրանայ մահմեդական մի պետութիւն, ինչպէս Թիւրքիան,—դա կարող է վտանգաւոր անդրադարձումներ ունենալ Հնդկաստանի 60 միլիոն անգլիահպատակ մահմեդականների վրայ, ինչպէս նաև Աֆղանիստանի ու Պարսկաստանի վրայ։

„Իսկ Թիւրքիան կարող է միայն այն դէպքում մտածել Եգիպտոսի գրաւման մասին, երբ կունենայ երկաթուղային սիստեմ Փոքր Ասիայում ու Սիւրիայում, երբ նա կը կարողանայ—անատոլիական երկաթուղու շարունակութիւնը կառուցանելով—յետ մղել Անգլիայի յարձակումը Միջագետքի վրայ, երբ նա կ'աճեցնէ ու կը բարձրէ իր բանակը և երբ նրա ընդհանուր տնտեսական վիճակն ու ֆինանսները կ'առաջադիմեն... Միւս կողմից սակայն այն հանգամանքը՝ որ Թիւրքիան զինուորական տեսակէտից կը լինի ուժեղացած, մնտեսապէս ամրապնդուած և կունենայ իր տրամադրութեան տակ բաւականաչափ երկաթուղային կապեր—այդ հանգամանքը բաւական կը լինի արդէն, որպէս զի Անգլիան հրաժարուի Գերմանիայ դէմ յարձակուելու գաղափարից. և այդ է, որ պէտք է նպատակադրէ գերմանական քաղաքականութիւնը։ Աջակցութեան քաղաքականութիւնը (die Politik der Unterstützung), որ Գերմանիան մղում է հանդէպ Թիւրքիայի, ուրիշ նպատակ չունի, բայց եթէ փորձել հայթայթելու զօրաւոր ապահովութիւն այն պատերազմական վտանգի դէմ, որ սպառնում է նրան՝ Անգլիայի կողմից“ *)։

Սքանչելիօրէն պարզուած է այստեղ, այս հակիրճ քաղուածի մէջ, Բաղդադեան երկաթուղու և ամբողջ գերմանական արևելեան քաղաքականութեան դրդումները ու նպատակները։ Ծրագիրը իրօք հոյակապ է։ Աւելի ևս մեծանում է նա քաղաքակիրթ մարդկութեան աչքում, երբ մտածում էք նաև ապագայ հողային նուաճումների մասին, որ անշուշտ, դուրս չեն Գերմանիայի ակնկալութիւններից։ Տնտեսական ծրագիրները վարագուրում են հեգեմոնիայի ձգտումը մահմեդական արևելքում, իսկ երբ կայ այդ հեգեմոնիան, երբ կայ տնտեսական ու կուլտուրական մի տեսակ գերիշխանութիւն երկրի մէջ, կան դրա հետ և յոյսեր—Գերմանիան, անտարակոյս, տածում է այդ յոյսերը — որ մի օր „հիւանդ մարդու“ յօշոտման խնդիրը վերստին հրապարակ նետուելով՝ նա ևս, Կայզերի պետութիւնը, „Թիւրքիոյ մաերիմ բարեկամը“, կունենայ իր բաժինը փարթամ ժառանգութիւնից...

Հարկ է տակաւին ծանրանալ գերմանական արշաւի քաղաքական շարժառիթների վրայ, ցոյց տալ խաղացուող դրամայի համաշխարհային արժէքը, ցոյց տալ նաև այն հաւանական անդրադարձումները, որ նա կարող է ունենալ մեր հայկական ճակատագրի վրայ։

*) *Paul Rohrbach, „Die Baydadbahn“*։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆՈՐ ԹԻՒՐՔԻԱՆ

VIII

ԿՐՕՆԱԿԱՆ ՊՐՕԲԼԵՄԸ

ՄԱՀՄԵԴԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ

Թիւրքիոյ պատմութեան մէջ կրօնը ահագին դեր է խաղացեր։

Անոր հինաւուրց արշաւանքներու, պատերազմներու, հասարակական այլ և այլ երևոյթներուն մէջ կրօնքին մասնակցութիւնը նշանակելի է։ Մարդիկ, համայնքները այս կամ այն գործը յղանալու, կիրարկելու ատեն յաճախ ղեկավարուած, ներշնչուած են կրօնքէն։

Սակայն մահմեդական ժողովուրդներու և երկիրներու նկատմամբ հեղինակներն ընդհանրապէս հակուած են եղեր կրօնին նշանակութիւնը իրականութենէն աւելի բարձրացնել։ Շատերու կարծիքով, բոլոր այն կարևոր իրողութիւնները, հասարակական, քաղաքական բոլոր անցուդարձերը—որոնք կը լեցնեն Թիւրքիոյ բովանդակ կեանքը—սկզբնաւորուած են կրօնքէն, ծագած են կրօնական հաւատալիքներէն։ Կրօնքը այդ երկրին մէջ ամենակարող է հռչակուած. կրօնքը այդ պատմութեան վճռական և անկասկածելի շարժիչն է դիտուած։

Այս տեսակէտը համապատասխան չէ իրականութեան պարզ ու ճշգրիտ ըմբռնումին։ Անիկա հետևանք չէ Թիւրքիոյ հասարակական, քաղաքական, տնտեսական միջավայրին խորունկ ուսումնասիրութեան։ Ինչ որ երևցած է հոն կրօնքին անունով և անոր հովանաւորութեան տակ — առանց խորազնին հետազօտութեան ընդունուած է իբրև արդիւնք կրօնական գործօնի։ Մինչդեռ աւելի ուշադիր քննութիւնը ցոյց կուտայ անտարակուսելիօրէն, որ շատ յաճախ Թիւրքիոյ պատմութեան դէպքերը կրելով կրօնական երևոյթ, կրօնական արտաքին, չունին սակայն նոյնպիսի ծագում, նոյնպիսի ներքին։ Կրօնքը շատ յաճախ հանդէս կուգայ հոն իբրև պատրուակ և ոչ իբրև իսկական պատճառ։ Եւ այդ պատրուակին ներքև յաճախ թագնուած են հասարակական-քաղաքական բարդ պատճառներ։

Կրօններու դերը մարդկային պատմութեան մէջ, քաղաքակրթութեան երկարատև ընթացքին բնորոշ է եղած, յաճախ կարևոր և նշանակալից, սակայն անիկա երբէք առաջնագոյնը, միակը և վճռականը չէ հանդիսացած։ Կրօնքը հակառակ մեծանուն պատմաբան Ֆիւստէլ դը Կուլանժի (*Fustel de Coulanges*) համբաւաւոր տեսութեան՝ տարամերժ նշանակութիւն չունի մարդկային կեանքին մէջ։ Անիկա չէ բոլոր երևոյթներուն պատճառը, հասարակական-քաղաքական իրողութիւններուն հիմքը։ Կրօնքը քաղաքակրթութեան ծնող չէ, քաղաքակրթութեան արտադրողը չէ։ Անիկա ինքը ծնունդ է քաղաքակրթութեան։ Անիկա արտադրութիւն է, արգասիք։

Քրիստոնէութիւնը յունական և հռոմէական քաղաքակրթութիւններու ստեղծողը չէ։ Ինքը այդ շքեղ

քաղաքակրթութեանց ստեղծագործութիւնն է։ Կրօնական այս վարդապետութիւնը երկար ժամանակ, միջին դարերու խաւար ու արիւնոտ ընթացքին, միանգամայն անկարող էր ազդելու մարդկանց դաժան և աններողամիտ բարքերու վրայ։ Երբէք թերևս այնքան խորունկ հակասութիւն չէ եղած կրօնական ըմբռնումներու և մարդկանց գործողութիւններու միջև։ Իրենց հաւատալիքներով, իրենց նուիրական կրօնով՝ միջին դարու անձերը սիրոյ, ներողամտութեան, եղբայրական օգնութեան, աւետարանական մարդասիրութեան կողմնակից էին, բայց իրենց գործերով՝ արիւնահեղ ու բռնաւոր, ատելութեան ու թշնամանքի երկրպագու։ Պետութիւնները, եկեղեցական, քրիստոնէական իշխանութիւնները—Յիսուսի կրօնը ձևականօրէն որդեգրելով հանդերձ—ամեն կերպ կ'անպատուէին անոր հիմնադրի յիշատակը, կը հաւածէին անոր վարդապետութիւնը անխնայ ու անպատկառ։ Կրօնի անունով խարոյկներ կը տնկէին ամենուրեք, կրօնի անունով հայրը որդուն կը խողխողէր, կրօնի անունով անլուր ոճիրներ կը գործուէին։ Հասկանալի է, որ քրիստոնէութիւնը այդ անբարոյ արարքներու պատճառը չէր, այլ միմիայն պատրուակը։ Ինչ որ ընդհանուր կեանքը, հասարակական, քաղաքական, տնտեսական մտահոգութիւնները կը թելադրէին՝ մարդիկ կը կատարէին լուռ ու հնազանդ։ Ինչ որ բովանդակ միջավայրը, իրականութիւնը կը հրահանգէր՝ անհատները, ազգերը կը կատարէին հակառակ իրենց կրօնական հաւատալիքներուն, հակառակ Քրիստոսի դարաւոր վարդապետութեան։

Կրօնը թերևս կրնար երբեմն սանձահարել մարդկանց գործողութիւններու թափը, բռնաւոր ընթացքը—բայց անիկա անզօր էր անոնց ծագումը փոխելու և ուղղութիւնը հիմնովին յեղաշրջելու։

Մարդիկ ձգտած են միշտ և ամենուրեք կրօնը յարմարցնել իրենց կեանքի պահանջներուն։ Երբ որ կեանքի ընդհանուր մակարդակի և կրօնի միջև խրամատը բացուեր է—աւելի յաճախ և աւելի շուտ կրօնքն է դէպի կեանքը գնացեր և ոչ վերջինս դէպի կրօնքը։ Արտաքին կարևոր իրողութիւնները, շրջապատի հրամայական դէպքերը ազդեր են կրօնի վրայ և զայն դէպի փոփոխութիւն, դէպի յեղաշրջում տարեր։ Այսպիսով՝ բոլոր կրօններու մէջ էւոլիւսիոն, ընթացքում է կատարուեր։ Այսօր քրիստոնեայ ազգերը քրիստոնէութեան նախնական տրամադրութիւններով և սկզբունքներով չէ, որ կը ղեկավարուին։ Անգամ ամենազուտ հաւատացեալը, մոլեռանդ կրօնականները, մաքուր քրիստոնեաները հարկադրուած են փոփոխութեան ենթարկել քրիստոնէական սկզբնական հրահանգները և անոր վրայ իրենց անհատական կարողութիւններու, ժամանակի հոսանքներու, հասարակական միջավայրի և պատմական հանգամանքներու կնիքը դնել։

Իսլամութեան մէջ այդ բնաշրջումը ակնյայտ է և շօշափելի։ Որքան ալ շատերը տարօրինակ յամառութեամբ պնդեն, թէ Մահմեդի կրօնը յաւերժօրէն խուլ է մնացեր շրջապատի ձայնին՝ իրականութիւնը, սակայն, բնորոշ և ծանրակշիռ փաստերով ցոյց կուտայ, որ այսօրուայ մահմեդականը իր կեանքի բոլոր մասերու մէջ չի կրնար անյողդողդ կերպով կիրարկել մարգարէի պատուիրանները։ Հեղումներ, գիտակցական և անգիտակցական անհամաձայնութիւններ շարունակ գոյութիւն ունին։ Ամենաանհաշտ մահմեդականը անգամ, ամենանակատաղի կրօնականը նոյնիսկ չի կրնար սրբութեամբ իրագործել նուիրական գրքին բոլոր հրահանգները և շատ յաճախ կը հեռանայ անկէ ու անոր սկզբունքներէն։ Կեանքը իր հրամայականներն ունի, որոնք աւելի ստիպողական են ու աւելի անվերապահ։ Կրօնը, անգամ Մահմեդի մոլեռանդ կրօնը չի կրնար գոցուած մնալ իրականութեան պահանջներու հանդէպ։ Քաղաքակրթութեան փոփոխութիւնը, ընդհանուր միջավայրի կատարելագործումը անհետևանք չի մնար։ Կրօնքը հասարակաց միւս բոլոր ստացուածքներուն նման իր վրայ կ'ընդունէ ընդհանուր քաղաքակրթութեան արձագանքը, կը կրէ շրջապատի անդիմադրելի ազդեցութիւնը։

Բնաշրջումը հարկադրական է կեանքի բոլոր գաւառներու համար։ Եթէ լեզուն, գրականութիւնը, պատմութիւնը, միտքը, գործերը, հոգեբանութիւնը կը փոխուին՝ կրօնը չի կրնար անփոփոխ մնալ։ Իսլամական վարդապետութիւնը այսօր այն անհանդուրժելի վերաբերմունքը չունի դէպի կեանքի հրամայականները, ինչ որ ունեցած է աւելի խաւար ժամանակներու մէջ։ Կրօնական շատ հեղինակներու կարծիքով, զուրանը աստուածային յայտնութիւն լինելէ զատ՝ իր մէջ կը պարունակէ նաև մարդկային խելքի արտադրութիւն։ Մարգարէն—անոնց յայտարարութեան համաձայն—ոչ ամբիծ է և ոչ անսխալ։ Աստուածային խօսքին հետ—որ նուիրական է և անփոփոխելի—մարգարէն տուեր է նաև իր խօսքը, որ միշտ կրնայ փոփոխութեան ենթարկուիլ։

Զուրանի այն մասը, որ „աստուածային յայտնութիւն" է՝ պիտի յարատեւէ ամբոխներու գիտակցութեան մէջ։ Իսկ այն մասը, որ մարդկային խելքի արտադրութիւն է՝ կարող է լքուիլ։ Եւ որովհետև շատ յաճախ անհնարին է զանազանել, անջատել „աստուածային յայտնութիւնը" մարդկային արտադրութենէն, ուստի ընդհանրապէս — նայելով միջավայրի քաղաքակրթական դրութեան և ժամանակի տրամադրութեան — հնարաւոր կը դառնայ նուիրական գրքին փոփոխութիւնը և կատարելագործումը։ Այսօրուան հասարակութեան մէջ մահմեդական կրօնի բացարձակ տիրապետութիւնը հետզհետէ տեղի կուտայ։ Իսլամը կ'ենթարկուի անխուսափելի բնաշրջումին։ Բնական, անյողդողդ զարգացումը իր զօրեղ արտայայտութիւնը կը դնէ նաև այդ կրօնքին վրայ։ Ժամանակակից մտահոգութիւնները աւելի հարկադրական, աւելի պահանջկոտ կը հանդիսանան, քան դարաւոր վարդապետութեան հինաւուրց և անժամանակակից հրահանգները։ Իսլամի ապագան բնաշրջումի պատմական շաւիղով առաջ կ'ընթանայ։ Կրօնը կամաց-կամաց կ'իջնայ դէպի հասարակութեան ստորին խաւերը, դէպի յետադէմ և անլոյս շրջանները։ Վերին շերտերը շատ չեն հաւատար անոր պնդումներուն և աստուածային կատարելութեան։ Իրենց մասնաւոր կեանքին մէջ, հասարակական, ընտանեկան, տնտեսական յարաբերութիւններու մէջ անոնք կը ղեկավարուին ուրիշ սկզբունքներով։

Եթէ պէտք է կնոջն անպատուել, եթէ պէտք է անոր ամբծութիւնն անարգել—մահմեդական հաւատացեալ-

ները երբէք չեն վստահիր, թէև կինը դրուած է մարդերի նուիրական պաշտպանութեան ներքև։ Եթէ պէտք է գործածել այս կամ այն ուտելիքը, այս կամ այն խմելիքը—անոնք սիրով և հաճոյքով կը կատարեն այդ, թէև իսլամական կրօնը արգելած ըլլայ։ Եթէ տնտեսական-առևտրական գործի մէջ անհրաժեշտ է փոխուած դրամի տոկոսը պահանջել — անոնք բնաւ չեն գիջիր իրենց շահը, թէև նուիրական գիրքը մերժած է այդ։ Այսօր իսլամական կրօնքի շատ հրահանգները կը մնան, կը քարոզուին ոչ այն պատճառով, որ հասարակութիւնը, մանաւանդ անոր վերին շերտերը, տիրապետող դասակարգերը կը հաւատան, այլ որովհետև այդ հրահանգները շատ յաճախ շահագործման աղբիւր են և տիրապետութեան հրաշալի գործիք։

Մահմեդական կրօնքի սկզբունքներուն անփոփոխելիութեան ջերմ պաշտպանները և մոլեռանդ կողմնակիցները միշտ անոնք են եղած, որոնց շահերը այդպիսի փոփոխութեան հետևանքով կրնային վնասիլ։ Կրօնական մտահոգութիւնը և աստուածային պատգամին անաղարտութիւնը չէ եղած անոնց մտածումներուն և գործերուն շարժառիթը, այլ միմիայն իրենց նիւթական շահը, իրենց տիրապետութեան անխախտութիւնը։ Կանգնելով կրօնական կատարելագործման և զարգացման ընդդէմ—բարձրագոյն ճառելով նուիրական գրքին անսահման իմաստութեան մասին—անոնք ձգտած են նոր ուժերու և հասարակական նոր դասերու յառաջխաղացութեան արգելք ըլլալ։ Ու չը նայելով այդ թշնամի ու անբարեացակամ տարրին — Մահմեդի կրօնքի մէջ բնաշրջումը այնուամենայնիւ սկսած է...

—

Իսլամութեան պրոբլեմը քաղաքակրթութեան ամենահետաքրքրական և ամենակարևոր խնդիրներէն է։ Ի՞նչ է եղած անոր դերը պատմական երկարատև դարերու ընթացքին, ի՞նչ տեղ է գրաւած ժողովուրդներու անցեալ կեանքին մէջ և ի՞նչ հաւանական ապագայ ունի. — ասոնք հարցեր են, որոնց քննութեամբ ու լուծումով ընդհանուր քաղաքակրթութիւնը այնքան շահագրգռուած է։ Եւրոպական քաղաքակիրթ պետութիւններն ու ժողովուրդները, տնտեսական և քաղաքական մերձեցումների շնորհիւ, կապուած են իսլամ երկիրներու հետ։ Քրիստոնէութեան և մահմեդականութեան ընդհարումը, մերթ արիւնահեղ արտայայտութիւններով, մերթ հանգիստ ու հաշտ, միջազգային պատմութեան նշանակելի էջերէն կը կազմէ։ Ի՞նչ երևոյթներ է հանդէս բերեր այդ ընդհարումը, պատմական-ընկերաբանական ի՞նչ հետևանքներ է ցուցադրեր և ապագային ի՞նչ մտաւոր ընթացք կունենայ երկու մեծ կրօններու դրացիութիւնը։ Այս խնդիրները եւրոպական քաղաքակրթութեան համար երկրորդական, աննշան քանակութիւններ չեն։

Պետութիւններու քաղաքականութիւնը, ժողովուրդներու գործնական յարաբերութիւնները մեծ չափով կ'ազդուին այդ խնդիրներու տեսական քննութենէն և եզրակացութենէն։ Թիւրիմացութիւնները երկու մեծ քաղաքակրթութիւններու միջև կը վերանան, անհաշտ, թշնամական ոգին տեղի կուտայ, ժողովուրդները և ազգերը իրարու կը մօտենան և միջազգային պատմութեան մէջ նոր դարագլուխ կը բացուի։

Նոր Թիւրքիոյ վերածնունդը անկարելի է իրագործել առանց կրօնական նախապաշարումներու ցրումին և տեղատուութեան։ Քանի որ քրիստոնէութեան և մահմեդականութեան հինաւուրց, չարաշուք պրոբլեմը կանգնած է հրապարակի վրայ, քանի աւետարանի և զուրանի հետևողները մնան դժբախտ թիւրիմացութեան մէջ—նոր Թիւրքիան չի կրնար առաջադիմել և կատարելագործուիլ, անոր վերակազմութիւնը չի կրնար ապահով և հաստատուն ըլլալ։ Իսլամութեան պատմական խնդիրը, որքան ալ նուրբ և զգայուն, որքան ալ իրապէս դժուարին ըլլայ անոր քննութիւնը —այնուամենայնիւ նոր Թիւրքիան պարտաւոր է աստիճանաբար ու մեղմիւ վանել այն արիւնոտ մշուշը, որ ծանրացած է այդ չարտանջ հարցին վրայ, լուսաւորել կատարուած անցքերը նոր, գիտական ճանապարհներով, մտածողութեամբ ու մեթոդներով, սահմանել իսլամութեան իսկական դերը և միւս գործոններու նշանակութիւնը՝ Թիւրքիոյ խաւար ու բռնաւոր պատմութեան մէջ։ Առանց այս աշխատանքի, առանց անցեալի վերագնահատման, առանց հին արժէքներու քննութեան և առանց բանաւոր, անկեղծ, շիտակ ընկերական-քաղաքական աշխարհայեացքի՝ Թիւրքիոյ վերածնութեան գործը անկանոն շաւիղի մէջ կը դրուի, անոր բարենորոգումները չեն ունենայ հաստատուն, անսասան բնաւորութիւն, անոր թշուառութիւնը և թուլութիւնը իրապէս չեն դառնայ պատմութեան անդառնալի սեփականութիւն։ Կրօնքին անունով և անոր ներողամիտ հովանաւորութեան տակ Թիւրքիոյ անբարեխիղճ վարիչները և տէրերը շատ յանցանքներ են գործեր դարերու անվախճան յաջորդականութեան մէջ և այսօր ալ կը գործեն տակաւին։ Պէտք է վերջապէս բօղամերկել իրողութիւններու ներքին բնոյթը, պէտք է ցուցահանել դէպքերու իսկական շարժառիթը, պէտք է մատնանշել իրական յանցագործութիւնները և անոնց խորունկ պատճառները։ Ցանուն Թիւրքիոյ ապագային և յանուն անոր յառաջադիմութեան անհրաժեշտ է ցրել այն կրօնական-իսլամական մղձաւանջը, որ մինչև այսօր կը ծանրանայ, կը ճնշէ երկրին սիրտը։ Պէտք է ցոյց տալ, որ Թիւրքիոյ վարիչները շատ յաճախ իրենց դասակարգային շահերու համար, իրենց տիրապետութեան յարատևութեան համար աղաւաղած են ամեն ինչ, շահագործած են ամեն սրբութիւն, անգամ կրօնը և մանաւանդ իսլամական կրօնը։ Այս գործին մաքուր և անշահախնդիր կատարումէն ետքը միայն՝ նոր Թիւրքիոյ վերածնունդը կ'ապահովի...

Իսլամութեան և քրիստոնէութեան դարաւոր դրացիութիւնը օսմանեան ընդարձակածաւալ կայսրութեան մէջ պատմական խոշոր իրողութիւն է։ Մահմեդական և քրիստոնեայ ազգերը կապրէին մէկ քաղաքական ռէժիմի ներքև քով քովի։ Անոնց քաղաքացիական և հասարակական իրաւունքները, սակայն, անոնց կեանքի պայմանները հաւասար չէին։ Պետութիւնը մահմեդական էր և ամեն կերպ կաշխատէր առանձնաշնորհել իսլամ տարրը ի վնաս քրիստոնեայ ազգաբնակութեան։ Սկսեալ Թիւզանդիոնի նուաճումէն՝ մահմեդականները իբրև յաղթողներ կը նեղէին, կը տանջէին քրիստոնեաները։ Ուժեղի և թոյլի յարաբերութիւն էր։ Յաղթողի և պարտուողի մշտական, տիեզերական կապ։ Ամեն ժամանակ և ամենուրեք այդպէս է եղած։ Կրօնները տարբեր ըլլային

թէ միևնոյնը—սակայն առաջնակարգ խնդիր չէր։ Ցաղթողը միշտ կը գործադրէ իր իրաւունքը, նուաճողը միշտ տէր է պարտուածներու սեփականութեան, ստացուածքին, պատուին, անգամ գոյութեան։

Այս պատմական ընդհարումը, տկարներու և զօրաւորներու այս մարդկային, առօրեայ յարաբերութիւնը օսմանեան երկրին մէջ քրիստոնէութեան և իսլամութեան անունով մկրտեցաւ։ Եւ երկար ժամանակ պատմութեան այնպէս հաղորդեցաւ՝ թէ իբր թշնամութիւնը կը ծագի միայն երկու դաւանանքներու, երկու կրօններու անվերապահ հակասութենէն։ Հակամարտութիւնը, վիճակներու տարբերութիւնը, իրաւունքներու անհաւասարութիւնը ո՛չ թէ տիրապետութեան ու նուաճման արդիւնքն են, այլ միմիայն քրիստոնէական ու մահմեդական ուսմունքներու, բացարձակ անհամաձայնութեան։

Այս միակողմանի տեսակէտը հիմունք դարձաւ պատմական հետազօտութիւններու և մինչև այսօր ալ իր տիրական ազդեցութիւնն ունի ժողովուրդներու և անհատներու մտածողութեան վրայ...

Քրիստոնեայ ազգերը — յոյները, ռումանացիք, սերբերը, բուլգարները, սև-լեռնցիք, մակեդոնացիք—փորկութեան միակ ճանապարհը տեսան մահմեդական տիրապետութեան անկումի մէջ և ամեն կերպ աշխատեցան դուրս ելլել այդ տիրապետութենէն։ Տասնիններորդ դարուն, ազգային խնդրի ուժգին զարթնումի միջոցին վերոյիշեալ ազգերը — մակեդոնացիք իբաց առեալ — կրցան ազատիլ մահմեդական լուծէն քրիստոնեայ Եւրոպային օժանդակութեամբ։

Պատմութեան համար չափազանց կարևոր է ոլորշել այն վիճակը, այն իրական ճակատագիրը, որ բաժին ընկան ազատագրուած ժողովուրդներուն իրենց սեփական տիրապետութեան ներքև։ Այս խնդիրը տակաւին բաւարարաչափ ուսումնասիրուած չէ և ոչ ալ վիճակագրական տեղեկութիւններով լուսաբանուած է։ Պնդողներ կան, որ վերոյիշեալ ազգութիւններու տառապանքը, նեղութիւնը, կարիքը շարունակեցաւ նաև հարազատ իշխանութեան մէջ։ Պնդողներ կան մինչև իսկ, որ այդ նեղութիւնը աւելի ծանր և աւելի անտանելի եղաւ ազատութեան ռէժիմի մէջ, քան իրապէս թիւրքական տիրապետութեան տակ էր։ Դժուար է անշուշտ համաձայնիլ այս տեսակէտի հետ, քանի որ ատոր ի նպաստ բաւարար հիմքեր և ապացոյցներ չկան։

Քրիստոնեայ այդ բոլոր ժողովուրդները, թօթափելով թիւրքական տիրապետութիւնը, լքեցին միաժամանակ նաև միապետական կարգերը և մտան սահմանադրական ռէժիմի ներքև։ Այս նոր հասարակակարգի մէջ կը բացակայէր ոչ միայն իսլամական ազդեցութիւնը, այլ և հինաւուրց բռնապետութիւնը։ Ժողովուրդը այստեղ մասնակցութիւն ունեցաւ պետական գործերու մէջ. օրէնքները բղխեցան ոչ թէ ինքնակալ ու ամենակարող միապետէն, այլ ժողովրդական—թէկուզ և հաշմանդամ—ներկայացուցչական մարմնէն։ Կառավարական այս նշանակալից փոփոխութիւնը, պետական ձևի այս հիմնական յեղաշրջումը շատ աւելի կարևոր գործօն էր, քան իսլամական կրօնքի անկումը և քրիստոնէութեան յաղթութիւնը։

Օսմանեան կայսրութենէն անջատուած բալկանեան քրիստոնեայ ժողովուրդներու յառաջադիմութիւնը, մտաւոր, տնտեսական, հասարակական զարգացումը աւելի շուտ հետևանք է սահմանադրական ռէժիմի, ներկայացուցչական սիստէմի — քան քրիստոնէութեան կանգնումի կամ մահմեդականութեան անկման...

Հայոց պատմութեան մէջ իսլամութեան պրոբլեմը աւելի նախնական է և աւելի հոչակաւոր։ Տակաւին եօթներորդ դարէն, մահմեդականութեան սկզբնաւորութենէն իսկ, հայերս յարաբերութիւններ ունեցանք իսլամ ժողովուրդներուն հետ։ Արաբական արշաւանքը, արաբական տիրապետութիւնը առանձին անգամ հաղորդակցութեան մէջ դրաւ մեր երկիրը մահմեդական աշխարհին հետ։ Այնուհետև մեր բովանդակ պատմութեան վրայէն երբէք չպակուեցաւ մահմեդականութեան չարաբաստիկ պատուաստը և մենք երկար դարեր մնացինք այդ միջավայրին, այդ մթնոլորտին մէջ ու անոր տիրապետութեան ներքև։ Արաբներէն յետոյ սելջուկները, թաթարները, պարսիկները, տաճիկները մեր երկրին, մեր իրականութեան, մեր գոյութեան տէրերը հանդիսացան։ Մեր պատմութիւնը և մեր ճակատագիրը կապուեցան ամենասերտ կերպով այդ ժողովուրդներու տիրապետութեան, յարմարուեցան անոնց իշխանութեան։ Մեր կեանքը ամբողջովին ենթարկուեցաւ անոնց ազդեցութեան և ներգործութեան։

Հայ մարդը դարեր շարունակ յարաբերութեան մէջ էր մահմեդական ցեղերու հետ։ Այդ յարաբերութեան ժամանակ անոնք տիրապետող էին, նուաճող—մենք միշտ պարտուած ու հպատակ։ Կորսնցուցինք մեր քաղաքական իշխանութիւնը։ Կորսնցուցինք մեր պետական անկախութիւնը։ Մեր երկիրը, մեր հայրենիքը յաճախ դժոխային սարսափներ տեսաւ մահմեդական տիրապետողներէն։ Շղթայազերծ մրրկի պէս թափառական ու կիսավայրենի ժողովուրդները կը տարածուէին մեր դաշտերու, մեր գիւղերու, մեր քաղաքներու վրայ և ամենուրեք ողբալի աւերակներ կը թողնէին։ Արշաւանքներէն ու պատերազմներէն յետոյ՝ կը նստէին մեր երկրին մէջ և կսկսէին, հանդարտ ու անվրդով, մեր յարատև ոչնչացումի, մեր սպառումի չարաշուք աշխատանքը։

Այս արիւնէ մշուշը, այս մահաբոյր մթնոլորտը մեր պատմութեան մէջ յայտնի դարձաւ մահմեդականութեան հարուած և քրիստոնէութեան նահատակութիւն անունով։ Եւ սերունդներու հոգեբանութեան մէջ ամրապնդեց այն խորունկ աշխարհահայեացքը, այն հիմնական տեսակէտը, թէ մահմեդականութիւնը և քրիստոնէութիւնը անհաշտելի հակառակորդներ են, դարաւոր թշնամիներ և փոխադարձաբար ժխտող ուժեր... Կրոններու, հաւատալիքներու տարբերութիւնը ճանաչեցաւ իբր եզական պատճառ այն յարատև հակամարտութեան, որ քրիստոնեայ հայերը և այլացեղ մահմեդականները հանդէս կը բերէին դարերու անվախճան ընթացքին։ Մեր պատմագիրները արիւնահոտ էջերու վրայ փռելով մեր աշխարհի դառնագին իրողութիւնները, մեր հայրենիքի յուսահատ գալարումները՝ մահմեդական արշաւանքներու միջոցին և անոնց տիրապետութեան ներքև՝ ընդհանուր առմամբ մէկ բացատրութիւն միայն ունէին—մահմեդականութեան անգթութիւնը, զուրանի անխղճութիւնը մէկ կողմէ, քրիստոնէութեան հնազանդութիւնը, աւետարանի սէրը միւս կողմէ... Մահմէդի կրօնքը անոնց

կը հրահանգէր կոտորել, ջարդել, սպառել հայերը, Քրիստոսի կրօնքը մեզի կը պատուիրէր լուել, համբերել, խաղաղութեամբ դիմադրել բոլոր փորձութիւններուն յանուն երկնային դրախտին և հանդերձեալ կեանքին։ Այս էր ընդհանրապէս պատմական այդ համբաւաւոր ու նշանակալից ընդհարման բովանդակ մեկնաբանութիւնը։

Սակայն մեր պատմիչներէն ոմանք իրենց նկարագրութիւններուն մէջ այնպիսի տեղեկութիւններ են հաղորդեր, որոնք կրնան հիմք դառնալ նաև այլ բացատրութեան։

Առաքել Դաւրիժեցին իր հետաքրքրական պատմութեան մէջ նկարագրելով Շահ-Աբասի արշաւանքը և անոր հետ կապուած բուռոր սարսափները՝ կանգ կառնու նաև այն ընդհարման վրայ, որ պարսիկներու և օսմանցիներու միջև երևան կուգար։ Արևելքի այդ հուժկու աշխարհակալը կը հրամայէր կոտորել, կողոպտել ոչ թէ միայն հայ, այլ և մահմեդական գիւղերը, աւար առնել ոչ թէ միայն քրիստոնեայ, այլ և իսլամական հասարակութիւններէն, ժողովուրդներէն...

Ծերունի պատմիչը այս տեղեկութիւններէն յետոյ կը յարէ թէ՝ Շահ-Աբասի նպատակն էր մեծ հարստութեամբ և առատ թալանով դառնալ իր բնակավայրը, փոյթ չէ այդ թալանը կամ այդ աւարը ո՛ւրկէ կ'ելլէր և ո՛վ կը տուժէր...

Այս տողերու մէջ ուշադիր ընթերցողը կրնայ տեսնել քիչ մը այլ մեկնաբանութիւն, քան քրիստոնէութեան և մահմեդականութեան ծանօթ հինաւուրց հակամարտութիւնը։

Մեր նորագոյն հեղինակներէն շատերը յաճախ անդրադարձէր են նոյն խնդրին վրայ։ Աբովեան ապրելով արիւնահեղ, բուռն, փոթորկալից ժամանակաշրջանի մէջ, տեսնելով մահմեդական տիրապետութեան դժոխային հետևանքները — չկրցաւ յստակ ու ջինջ ըմբռնել պատմական դէպքերու ներքին բնոյթը և յուսահատ ու մեծ զայրոյթով յարձակեցաւ ընդհանրապէս մահմեդականութեան վրայ։ Մեր պատմութեան բովանդակ դժբախտութիւնը նա կը տեսնէր իսլամութեան մէջ և քրիստոնէական տիրապետութենէն կը յուսար մեր միակ փրկութիւնը։

Պատկանեան իր արիւնավառ երգերու մէջ աւելի անվերապահ և աւելի անհաշտ եղաւ դէպի մահմեդականութեան պրոբլեմը։ Նա այնքան խորունկ կը համարէր թշնամութիւնը, այնքան անհրաժեշտ ու բանական, որ մինչև իսկ հեռաւոր ապագաներու համար կը հրահանգէր, կը կտակէր ոխ և վրէժխնդրութիւն։

Այս յոռետես տրամադրութիւնն ու մտածողութիւնը կը պայմանաւորուէր այն սարսափելի անցեալով և ներկայով, որ ժողովուրդն ունեցեր է մահմեդական տիրապետութեան ներքև։ Դժուար էր անկասկած անմարդկային նախճիրներու մէջ պահպանել մտքին պաղութիւնը, դատողութեան մառալ սառնութիւնը։ Ամեն մարդ, որքան ալ անվրդով իմաստասէր ըլլայ կամ առարկայական գիտնական, հասարակական մրրիկներու ու յախուռն շարժումներու ժամանակ չի կրնար հանդէս բերել սովորական, հանապազօրեայ հաւասարակշռութիւնը, եթէ մանաւանդ ինքն ալ անհատապէս կամ հաւաքականապէս շահագրգռուած է կատաղող անցքերով։

Այսպէս. հայերու և մահմեդական ցեղերու պատմական, դարաւոր ընդհարումը դիտուեր է իբր քրիստոնէութեան և իսլամութեան անհաշտութիւն, որ իբր երբէք չի կրնար վերանալ, քանի գոյութիւն ունին այդ երկու կրօնները և քանի անոնք—հայերն ու այդ ցեղերը—կը յամառին իրենց դաւանանքին մէջ։

Այսօր ընկերաբանական-պատմական գիտութիւններու զարգացման և հասարակական գիտակցութեան զսման միջոցին, հնարաւոր է արտայայտել տարբեր վերաբերմունք և տարբեր հոգեբանութիւն։

Հայերու և մահմեդականներու հինաւուրց ընդհարման մէջ կրօնական անհաշտութիւններէ աւելի՝ պէտք է տեսնել քաղաքական, հասարակական, տնտեսական տարբերութիւններ։ Խնդիրը դաւանական լինելէ առաջ՝ տիրապետական էր։ Մահմեդական ցեղերը կը կամենային տիրապետել, նուաճել հայերը, օգտուել անոնց հայրենիքէն, հարստութենէն, ունեցուածքէն։ Ինչպէս տեսանք Դաւրիժեցու փոքրիկ ակնարկէն՝ մահմեդականները յաճախ նոյն նպատակը իրագործելու համար կանգ չէին առներ նաև իրենց կրօնակիցներու կայքին և բարիքին հանդէպ։ Այն ժամանակ, երբ պէտք էր աւար առնել, երբ պէտք էր իշխել—կրօնական մտահոգութիւնները տեղի կուտային և առաջ կը նետուէին տիրապետութեան խնդիրները։ Պատմութիւնը երկար ժամանակ ականատես եղաւ պարսկա-թիւրքական պատերազմներուն։ Այդ պատերազմներու երկարատև տևողութեան ընթացքին մահմեդականները միմեանց ոչ պակաս կատաղի և անխնայ թշնամի էին, քան քրիստոնեաներու նկատմամբ։

Հայաստանի մահմեդական տիրապետողներուն հաճելի էր ընդարձակ մասսաներու մէջ վառ պահել ատելութիւն դէպի հայերը։ Այս ատելութեան և թշնամութեան միջոցով միայն անոնք կրնային երկար ժամանակ տիրել, սեփականել հայերուն աշխատանքը։ Այդ ատելութիւնը անհրաժեշտ էր, որպէս զի տիրապետող դասերը, իշխանները, կառավարիչները, երկրին տէրերը կրնային ժշտնջենապէս շահագործել հայ տարրին արիւն-քրտինքը։ Կրօնական տարբերութիւնը լաւագոյն գործիքն էր այդ պարագային։ Տիրապետողները ձեռք առան այդ նուրբ զգացումը և երկար դարեր ծառայեցուցին զայն իրենց նպատակներուն։ Ստեղծուեց համբաւաւոր ներհակութիւնը, իսլամութեան և քրիստոնէութեան չարաշուք պրոբլեմը։ Թերևս երբէք այնպիսի բիրտութեամբ և անիրաւութեամբ կրօնական զգացումները չեն շահագործուեր տիրապետող դասերու ձեռքին, որքան այստեղ, արևելեան այս դժնդակ քաոսին մէջ...

Ազգերը, հասարակական զանգուածները, կատաղի ու խելակորոյս, իրար վրայ կը նետուէին, և այդ սարսափելի ժխորին մէջ ծափ կը զարնէր տիրապետողը ու կ'ուրախանար, որ յաջողեցաւ իր շահերուն համար կրօնական փոթորիկներ ստեղծել։

Պատմական այդ խորունկ ընդհարման մէջ, դարաւոր այդ կատաղի մրցման մէջ կրօնին, դաւանութեան դերը երկրորդական էր։ Այս կարգի հակամարտութիւնը կը պահուէր, կը կանգնէր, կը մնար ոչ իր ներքին անհրաժեշտութեամբ, ոչ դաւանական անխուսափելի հակասութեամբ, ոչ իր անդիմադրելի ներգործութեամբ, այլ

տիրապետող դասերու, կառավարիչներու գիտակցական հրահրումով և անոնց սիստեմատիկ աշխատանքով։

Միջավայրին տգիտութիւնը, յետամնացութիւնը, հասարակական-քաղաքական խնդիրներուն անըմբռնողութիւնը, հանրային գիտակցութեան անգործակցութիւնը, զանգուածներու մառախլապատ տրամաբանութիւնը և անկապակից հոգեբանութիւնը—այս բոլորը լաւագոյն պայմաններն էին կրօնական-դաւանական շահագործման և զգացումներու ամեն տեսակ աղաւաղման համար։

Մեր պատմութեան բոլոր սարսափներուն մէջ իսլամի կրօնը ինքնին տիրապետող դեր չունի... Երկար ժամանակ Հռոմը և Բիւզանդիոնը, այդ քրիստոնեայ, ուղղափառ պետութիւնները իսլամ տիրապետողներէն աւելի բարեխիղճ, աւելի մարդկային կերպով չեն վարուեր մեր ժողովրդին և մեր երկրին հետ։ Եթէ Հայոց պատմութիւնը իսլամ վարիչներէն ստացած բազմաթիւ վերքեր ունի, անիկա դժբախտաբար ազատ չէ մնացած հաւատակից ժողովուրդներու նեռներէն։ Իւրաքանչիւրը իր կարողութեան չափով, առանց կրօնական արգելքներու և խոչընդոտներու առջև կանգ առնելու՝ ձգտած է իր տիրապետութիւնը յաւերժացնել Հայաստանի վրայ և սեփականել վերջինիս նիւթական և բարոյական աշխատանքը։ Մեր պատմիչները արիւնոտ էջեր են արձանագրած այն սարսափներէն և այն դժոխային մեքենայութիւններէն, որ ձիգ տարիներ արևմուտքի քրիստոսապաշտ պետութիւնները յղացան և դաւեցին մեր՝ երկրի համար։ Եւ եթէ անոնք, մեր ժողովրդի նահատակութեան այդ հինաւուրց և սրտառուչ երգիչները ողբացել են իսլամի լուծն ու բարբարոսութիւնը, պակաս չեն արտասուել նաև հռոմէականութեան և բիւզանդականութեան բեռն ու նենգութիւնը։

Հայերուս նորագոյն պատմութեան մէջ այդ վաղեմի երևոյթը տարբեր ձևով կը կրկնուի։ Որքան ալ ռուսական տիրապետութիւնը կովկասահայերու համար — համեմատելով նախկին մահմեդական տիրապետութեան հետ — որոշ բարիք հանդիսացած ըլլայ, այնուամենայնիւ պատմական իրողութիւն է այն՝ խորունկ թշնամութիւնը, որ կը տածէ հիւսիսային խաչապաշտ պետութիւնը, սկսեալ տակաւին պասկևիչի ժամանակներէն, անցած դարու երեսնական թուականներէն, դէպի բովանդակ հայութիւնը։ Ռուս քաղաքականութեան դաւերը այդ գործունեայ և աշխատասէր ժողովրդին դէմ անցան ամեն սահման։ Անոր միջոցով, անոր նիւթական, զինուորական, բարոյական գնահատելի աջակցութեամբ տիրացաւ Կովկասին և տիրապետութեան հետևեալ օրն իսկ մոռցաւ իր խոստումները, լքեց իր պարտականութիւնը և ոտնահարեց այն մաքուր երախտիքը, որ հայ ժողովուրդը անձնուիրաբար հանդէս եր դրեր քրիստոնեայ Ռուսաստանին համար։

Մեր երկիրը և մեր ազգը այնուհետև կողոպուտի և շահագործման առարկայ դարձան խաչապաշտ տերերի համար։ Հակստաուզէն և Վագնէր, եւրոպացի յայտնի գիտնական-ճանապարհորդները, քառանկանյինական թուականներուն կը նկարագրեն կովկասահայերու թշուառութիւնը, ռուս քաղաքականութեան անմարդկային և անհեռատես արարքները, որ մինչև իսկ շատ տեսակէտներով, հին, մահմեդական տիրապետութիւնը նուազ տաժանական կը համարեն։

„... Դժբախտաբար ռուսաց պաշտօնեաները հայերու թշուառութիւնը մեղմելու համար բան մը չ'ըրին։ Մանաւանդ անոնցմէ շատերը այն ասիական անամօթացան, որ քիչ մը շարժական ինչք ունեցող հայերու ձեռքէն՝ նոյն փորը մնացորդն ալ կողոպտեցին, առան։ Այս բարի, անմեղ և գործասէր հայազգի գիւղացիները 14 տարի Արագածի վրայ բնակելէն ետքը դեռ չը կրցան քիչ մը շունչ առնուլ. ծանր տուրքերու տակ կը հեծեն և ողբալի վիճակի մէջ են“։ (Վագնէր, էջ 123)։

„... Նոյն իսկ ռուս պաշտօնեաները խոստովանեցան, որ Երևան նահանգին աղքատութիւնն ու խեղճութիւնը տարուէ տարի երթալով կ'աւելնայ։ Ճարտարութիւն չկայ։ Երկրին բերքը հազիւ թէ տեղացոց կը բաւէ։ Ռուսի արքունի գանձն ու հարստացած պաշտօնեաները ասանկ աղքատ երկրէ մը տարէ տարի կէս միլիոնէն աւելի արծաթ ռուբլի կառնեն և անոր տեղը բռնող կամ լրացնող բան մը չ'ն տար... Խեղճ տեղացիք իրենց շահաւոր առևտուրը կորսնցնելէն ետքը, ռուս տիրապետութեան տակ ցաւալի կերպով մը երկայն ատեն կուսակալներու ձեռքով կողոպտուեցան և կեղեքուեցան։ Ամեն մէկ կուսակալ հոս թագաւորի պէս կապրի։

„... Բնակիչները պարսից բռնութիւնները գիտնալով ալ՝ յաճախ անոնց իշխանութիւնը բաղձալի կը համարեն“... (Վագնէր, էջ 30—35)։

Դժբախտաբար մեր յօգուտին սահմանները չեն ներեր աւելի ընդարձակօրէն կանգ առնուլ այս շատ հետաքրքրական խնդրին վրայ։ Վերի հատուածներն ալ անհրաժեշտ համարեցինք, ցոյց տալու համար, որ ռուս քաղաքականութիւնը հայ ժողովրդին կայքին, ունեցուածքին վրայ մահմեդականէն շատ ալ տարբեր տեսակէտով չէ նայեր։ Ցիշեալ գիտնական ճանապարհորդները, ռուս կառավարութեան աջակցութեամբ ու օգնութեամբ կ'ուսումնասիրէին մեր երկիրը և սակայն անոնց աշխատութիւններուն մէջ մէկէ աւելի են նման նկարագրութիւններն ու աւանդումները։ Հիմա կայ ենթադրելու, որեմն, որ իրականութիւնը աւելի դժոխային պիտի ըլլար... ռուս կառավարութիւնը կ'արհամարէր ամենատրանին եղբայրակցութիւնը և իր քաղաքականութեան մէջ ոչ մէկ քրիստոնէական տարր կը մտցնէր։ Հարիւր տարիներէ ի վեր խաչապաշտ պետութեան համար մենք եղած ենք անխիղճ հարստահարութեան առարկայ, ամեն տեսակէտով—ազգային, կրօնական, քաղաքական, տնտեսական, քաղաքակրթական։ Վերջին դարուս մեր պատմութիւնը հրապարակի վրայ է և ոչ մէկ կերպ կարելի է ուրանալ անոր աղաղակող բովանդակութիւնը։ Եթէ մահմեդականները հայերու մէջ իսլամութիւն տարածելու նպատակով ամեն փորձանք պատճառեցին մեզ, ռուս տիրապետողներն ալ քրիստոնէութիւն տարածելու նպատակով՝ ամեն թշնամութիւն և ամեն բռնութիւն գործադրեցին։ Կրօնական-դաւանական խնդիրներէն զատ և անոնց վերև կան տարբեր մտահոգութիւններ, տիրապետութեան հետամտութիւն, նուաճման յոյսեր, տնտեսական, քաղաքական, քաղաքակրթական բարդ հարցեր և շահեր, որոնք աւելի կարևոր և աւելի նշանակալից դեր կը խաղան ազգերու ճակատագրին և պատմութեան մէջ...

ԱՄԲԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՒ ԲԵԼԼԻՆԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Մենամարտը շարունակւում է Երիտասարդ Թիւրքիայի և ապստամբ Ալբանիայի միջև։ Դժուար է նախատեսնել վախճանը։ Դժուար է գուշակել հետևանքները այն սարսափելի աւերածի, որ կատարեցին Թիւրքաց զօրքերը ապստամբութեան թատերավայրում և նրանցից դուրս։ Ամբողջ գաւառներ սրի ճարակ եղան։ Ամբողջ տնտեսութիւնը ոչնչացաւ։ Եւրոպական խոշոր թերթերը նկարագրեցին այդ նոր համիդավայել վայրագութիւնները, և ցասման ճիչ բարձրացաւ ամենուրեք։ Ցուզուեց մանաւանդ Աւստրիան։ Ապստամբ մալիսսորները կաթոլիկներ են և որոշ չափով ենթակայ աւստրիական հովանաւորութեան։ Վիեննայի կառավարութիւնը բողոքեց, սպառնաց։ Այդ անակնկալ ճնշման տակ Երիտասարդ Թիւրքիան մեղմեց իր եռանդը, զէնքը վար դրեց, սուլթանի բերնով ներում հռչակեց և խոստացան միաժամանակ ի կատար ածել մի շարք ռէֆորմներ։

Այդ բոլորը թղթի վրայ էր միայն։ Ցակից գործում էր հալածողական տենդը Թօրղութ փաշայի բանակի մէջ։ Ալբանացիք, լաւ տեղեակ այդ խորամանկ մանեւվրներին՝ վար չէր դրին իրենց զէնքը։ Ի՞նչ են ուզում նրանք։ Ինչի՞ են ձգտում։ Շատ ծայրայեղ չեն այդ քաջարի լեռնականների պահանջները։ Նրանք չեն ուզում անկախութիւն. չեն իսկ պահանջում քաղաքական ինքնօրինութիւն, ավտոնոմիա։ Առաջ բերենք քաղուածօրէն այն ուշագրաւ և սրտառուչ յիշատակագիրը, որ 22 ռազմական շէֆերի ստորագրութեամբ ուղղուեց Եւրոպային և որ հրատարակուեց մի շարք խոշոր օրգաններում։ Ապստամբները կոչ են անում, յանուն Բերլինի դաշնագրի, յանուն 23-րդ յօդուածի, որ արձանագրուած է մեր տխրայիշատակ 61-րդ յօդուածի կողքին։

Ուշագրաւ է ալբանական այդ մէմորանդումը այն տեսակէտից, որ թարգմանում է բոլոր „հպատակ“ քրիստոնեայ ազգերի իղձերը և գանում է — նման հ. Յ. Դաշնակցութեան, նման Թիւրքական ազատամիտ հատուածի—Թիւրքիոյ բարօրութեան գրաւականը դաշնակցական, ֆէդերատիֆ կարգերի մէջ։

„Թո՛ղ իմանայ Եւրոպան—գրում են 22 ռազմական հրամանատարները — որ մենք ամենաանկեղծ, ամենայուսալի բարեկամներն ենք Սահմանադրութեան։ Ճիշտ է, այո, որ հին ռէժիմի օրով մենք վայելում էինք առանձնաշնորհումներ, ստացուած փոխարէն այն արեան հեղեղների, որ մենք թափել ենք ի փառս օսմանեան կայսրութեան։ Բայց մենք բերկրանքով հրաժարուեցինք նրանցից, յուսալով, որ նոր ռէժիմը կըստեղծի ամբողջ կայսրութեան համար կարգի, առաջադիմութեան և բարօրութեան պայմաններ, որոնք սեփականութիւն են արևմտեան ժողովուրդների...

„Եւրոպան պէտք է նաև իմանայ, թէ ինչ ձևով էին նոր ռէժիմի տակ ընտրում ժողովրդային ներկայացուցիչները պարլամենտի համար, ինչպէս էին սահմանում օրէնքները և ինչ ձևով էին գործադրում։ Ընտրողական սիստեմը—շատ նահապետական, ներդցած — ունի որոշ տենդենց... և պարլամենտի ահագին մեծամասնութիւնը եղաւ միմիայն մէկ տարր—օսմանլիները։ Օսմանեան կայսրութիւնը, սահմանադրական ռէժիմի ներքոյ, շնորհիւ իր ազգայնական բաղադրութեան, կարող է լինել միայն դաշնակցական, կոնֆէդերատիվ... Սրբութեան սիստեմը այնպէս է սահմանուած, որ բոլորովին ճնշում են առանձին ազգութիւնների լեզուները. դա միանգամայն բռնաւոր ու կամայական մի օրէնք է։

„Աւելացրէք այդ բոլորին, որ նոր ռէժիմը չը կատարեց ոչ մէկը իր խոստումներից և չ'արդարացրեց իրեն վրայ դրուած յոյսերը, որ նա չը շինեց անգամ սալայատակ ուղիներ, կամուրջներ, երկաթուղիներ, քարափներ, որ նա ձեռք չ'առաւ անգամ ամենատարրական միջոցներ՝ հանրային առողջապահութեան ու բարօրութեան համար,— և այն ժամանակ ձեզ պարզ կը լինի, թէ ինչու ապստամբեց ալբան ժողովուրդը այդ ճնշող ու աղքատացնող ռէժիմի դէմ... Մենք շատ լաւ գիտէինք, թէ որքան թոյլ ենք կայսերական հզօր բանակի հանդէպ, բայց շարունակեցինք կուել, միակ նպատակ ունենալով՝ հրաւիրել արևմտեան պետութիւնների ուշադրութիւնը մեր ազգային դատի վրայ...

„Մենք պարտաւոր ենք սատրադրել աւելի բարձր կարգի նկատումների՝ մեր անկախութեան ձգտումները, որոնք ոգևորում են ալբան ժողովրդին արդէն մի շարք դարերից իվեր։ Մենք խնդրում ենք մացնել միայն լայն ազգային ինքնօրինութիւն, որը հնարաւորութիւն կը տայ մեզ՝ մնալ օսմանեան կայսրութեան ծոցում, իբրև գործօն, արդասաւոր մի միութիւն, իբրև առաջադէմ ու զարգացող մի ազգ, որ գիտակից է իր իրաւունքների ու պարտաւորութիւնների“։

Բերլինի դաշնագիրը ապրում է։ Ապրում են 23-րդ, 61-րդ չարաբաստիկ յօդուածները։ Ալբանական դիմումը մի պերճախօս ապացոյց է դիւանագիտական յօդուածների այդ տխրաշունչ կենսունակութեան։ Եւ նրանք ապրում՝ են Երիտասարդ Թիւրքիայի յանցանքով։ Նրանք կ'ապրին, քանի դեռ կը շարունակի պանթիւրքիզմի „միտորոշ“ և ձուլիչ քաղաքականութիւնը։ Քանի դեռ տիրապետող տարրը չի սովորի յարգել ոչ-թիւրք ժողովուրդների սրբազան, անձեռնմխելի իրաւունքները։ Այսօր Ալբանիան է, վաղը կը լինին մակեդոնացիք, հայերը։ Քալկանեան նահանգներում չի՞ շարունակւում փաշայական հինաւուրց սիստեմը, քրդական կամայականութիւններն ու գազանութիւնները։ Նպատակ ունի՞ Երիտասարդ Թիւրքիան՝ իր „հպատակ“ բոլոր ազգերին հաստատել դադնութեան ու յուսահատութեան գագաթնակէտին և նոր՝ նէ ահաւոր այժմեութիւն հաղորդել Բերլինեան դաշնագրին, որի գոյութիւնը նա ջնջել էր ուզում օսմանեան սահմանադրութիւնը հռչակելուց յետոյ...

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ

Ռուսերի պես պայթեց Գերմանիայի անակնկալ միջամտությունը Մարոկկում։ Այն ժամանակ, երբ Ֆրանսիան և Սպանիան, օգտուելով այդ դժբախտ երկրի անիշխանական վիճակից, թափում էին այնտեղ իրենց զորքերը և գրաւում հողաբաժիններ, Գերմանիան ևս յանկարծ որոշեց հրապարակ նետուել և գրաւեց Մարոկկեան փոքրիկ մի նաւահանգիստ—Ագադիրը։ Բոլոր երեք պետութիւնների դիպլոմատներն էլ հաւաստիացնում են, որ այդ գրաւումները ժամանակաւոր են, որ անիշխանութիւնը դադրելուց յետոյ, պիտի յետ քաշուին, յարգելով Մարոկկոի քաղաքական ամբողջութիւնը։ Բայց դա միայն կեղծ, մակեաւելիկ խաղեր են, իրօք բոլորն էլ հետապնդում են նուաճումների, բոլորն էլ ձգտում են յօշոտել հսկայ պատառը։ Իրօք խախտուած է Ալժեզիրասի հռչակաւոր դաշնագրութիւնը։

Սակայն այդ յօշոտումը չի կարող անցնել առանց խոշոր ցնցումների։ Ֆրանսիան չի կարող հաշտուել այն մտքի հետ՝ որ իր հարևանութեամբ, իր Ալժիրեան գաղութների մօտ հաստատուի հզօր ու երդուեալ հակառակորդը—Գերմանիան—իր յարաճուն ու ծաւալուն ազգաբնակութեամբ, իր տնտեսական ու քաղաքական յարաբերութեամբ ախորժակներով... ևս առաւել՝ որ իւրաքանչիւր մի վէճ հեռաւոր Աֆրիկայում պէտք է լուծուի անհրաժեշտաբար Հռենոսեան հովիտների մէջ...

Այնորէն ահա զօրանալում են ահազանգերը, նորէն պատերազմի ուրուականը պատյտներ է գործում քաղաքակիրթ մարդկութեան վրայ։ Հօվէն մամուլը երկուստեք յուզում է և վրէժխնդիր ու սպառնական ճիչեր արձակում։

Ֆրանսիան շատ մեղմ, քաղաքավարի եղանակով առաջադրում է իր non posumus-ի պահանջը Գերմանիային, հասկացնելով, որ այդ վերջինը չի կարող յարատև կայան հաստատել Ագադիրում։ Կը համակերպի՞ Կայզերի վէս կառավարութիւնը, իր գոռոզ ժեստը անելուց յետոյ... Ահա խնդիրը։ Եթէ Ֆրանսիան մենամենակ լիներ, պատասխանը պարզ էր։ Գերմանիան այդ դէպքում գուցէ յոյս ունենար՝ նոյնիսկ առանց թնդանօթի ուժին դիմելու, արհամարհել Ֆրանսիայի պահանջները և ամուր ոտք դնել Մարոկկում։ Սակայն, Ֆրանսիայի բախտից, կայ երրորդ շահագրգռուած պետութիւնը — Անգլիան, որ նոյնպէս ըմբոստանում է գերմանական յաւակնութիւնների դէմ... Անգլիան չի կարող, արդարև, հանդուրժել, որ իր ծովային մեծագոյն ոսոխը կայան հաստատի Միջերկրականի վրայ, ուր նա գրեթէ միահեծան է։ Այն ինչ՝ գերմանական կապիտալիստների շահը թելադրում է՝ ամեն գնով մուտք գործել աֆրիկական նոր կուսական վայրերի մէջ, ուր կան հանքեր ու այլ գանձեր շահագործելու...

Բանակցութիւնները տենդային կերպով առաջ են մղուում Ֆրանսիայի և Գերմանիայի միջև, այն ինչ՝ մամուլը քաղաքագէտ մարգարէների բերնով հրամեցնում է անդադար իր կռահումներն ու գուշակութիւնները յուզուած աշխարհին։

ՍՕՑԻԱԼԻՍՏՆԵՐԻ ԴԻՐՔԸ

Բողոքի ցոյցեր սկսուեցին հնարաւոր պատերազմի դէմ — ամենից առաջ՝ սոցիալիստ կուսակցութիւնների կողմից։ Պէտք էր ի գործ դնել Շտուտգարտի և Կոպենհագի միջազգային կոնգրէսների որոշումները։

Վաղուց արդէն, պարլամենտի մէջ և միտինգներում, Ֆրանսիական սոցիալիզմը հնչեցնում էր իր խաղաղասէր ձայնը, զգուշացնում էր հայրենի կառավարութիւնը վտանգաւոր արկածների դէմ։ Ծօռէս քանի՞ նիզակներ է ջարդել Մարոկկեան Կօշմարի առթիւ։ և այժմ ահա նրա յոռետես գուշակութիւններն են, որ արդարացան։ Ֆրանսիան դրդուած մի բոլոն գիշատիչ ու աւարառենչ կապիտալիստներից, միշտ աւելի և աւելի խորասուզուեց աֆրիկական արկածներում, մինչև որ վրայ հասաւ տագնապը և Ֆրանս-գերմանական յարաբերութիւնները նորէն սրեցին։

Զարկեց ահակոչնակը և Բրիւսելի Միջազգային Սոցիալիստական Բիւրոն։ Նա դիմեց բոլոր ազգերի սոցիալիստ ներկայացուցիչներին և թելադրեց, անհրաժեշտութեան պարագայում, գումարել Բիւրոի նիստ։

„Դրօշակի“ խմբագրութիւնը ստացաւ հետևեալ շրջաբերականը Սոց. Բիւրոի գործադիր մարմնից.

Բոլոր երկրների սոցիալիստ կուսակցութիւնների քարտուղարներին ու պատգամաւորներին.

„Գերմանիայի յանկարծական որոշումը՝ զրկելու Մարոկ իր մի զրահանաւը, աւելի ևս ծանրացնում է այն լարուած յարաբերութիւնները, որ գոյութիւն ունին ներկայումս շահագրգռուած պետութիւնների միջև։ Եթէ անհրաժեշտ միջոցները ձեռք առնելու համար, ժամանակը պնտեհ էք համարում գումարելու պատգամաւորական ժողով Գերմանիայի, Ֆրանսիայի, Սպանիայի և նոյն իսկ Մեծ Բրիտանիայի սոցիալիստների կողմից, կը խնդրեի ստիպողաբար լուր տալ ինձ։

Եղբայրական ողջոյններ

Գործադիր Մարմնի կողմից՝

ԿԱՄԻԼԼ ՀԱՅՄԱՆՍ

Այդ շրջաբերականին պատասխանել են շահագրգռուած երկրների պատգամաւորները։

Էդուարդ Վայիան (Ֆրանսիա) գրում է ի միջի այլոց.

„Վտանգը բաւականաչափ անխուսափելի չը լինելով... մենք պիտի գոհանանք առայժմ խորհրդակցութեամբ։ Բայց եթէ նա աճի և դառնայ սպառնական՝ մենք ստիպողաբար կը խնդրենք, առանց նոյնիսկ նախապէս խորհրդակցելու ազգային մասնաճիւղերի հետ՝ հրաւիրել անմիջապէս Միջազգային Սոցիալիստական Բիւրոի նիստ“։

Մակդոնալդ (անգլիական աշխատաւորական կուսակցութեան պարագլուխ) գրում է.

„Եթէ Մարոկկի ներկայ վիճակը յարատևի, պէտք է որ շահագրգռուած կուսակցութիւնները համաձայնութեան գան՝ հրաւիրելու Միջ. Սոց. Բիւրոի ժողով և միևնոյն ժամանակ կազմակերպելու հրապարակային մի ցոյց, ուր պիտի խօսին բոլոր ազգերի սոցիալիստ պատուիրակները։ Ժողովը և ցոյցը պէտք է տեղի ունենայ չէզոք հողի վրայ, օրինակ Բրիւսսելում“

Բեբել (գերմ. սոց. կուս. պարագլուխ) գրում է Ցիւրիխից.

„Լսում եմ, որ շուտով պէտք է գումարուի Միջ. Սոց. Բիւրոի նիստը Մարոկկի առթիւ։ Ես մտադիր եմ մասնակցել, եթէ ինձ այդ հնարաւոր լինի“։

Երկու օր յետոյ, հօրիզոնը փոքր ինչ աւելի պարզւեցաւ։ Բէրէլ գրում է նոյն Սիջ. Սօց. Բ.-ի Գոր-ծադիր Մարմնին.

„Մարօկկի խնդիրը նոր բնոյթ ստանալով, ըստ իս աւելի լաւ է դեռ սպասել, Բիւրօի ժողով փուլ մարելու համար և շուտ չ'այրել մեր վառօդը“։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԳՆՈՒՆԵԱՆ

1899-ի աշնան էր. Պետերբուրգի յետ ընկած թաղերից մէկում, բժիշկ X...-ի մօտ, մի երեկոյ հաւաքւել էր մուն-դիրաւոր երիտասարդների մեծ բազմութիւն։ Մայրաքաղաքի „դաշնակցական“ ուսանողութիւնն էր, որ եկել էր խորհրդակցել առնելու նորակ ընկերից, դրա Ֆեռ միասին վիճաբանութեան դնելու այժմեական ցաւոտ հարցերը։ „Դաշնակցութիւնը պէ՞տք է արդեօք շարունակէ իր նախկին տակտիկը, պէ՞տք է արդեօք հանդիսանայ սոսկ իբրև թիւրքահայկական կուսակցութիւն, թէ՞ պէտք է ստանձնէ և կովկասահայ պայքարի դատը... Ցաք բանակուի մէջ—որ տեւեց մինչև ուշ գիշեր —կենդանի մասնակցութիւն ունէին երեք ուսանող. Մարգար Ժամհարեան, Եղիշէ Թոփչեան և Բօղդան Դնունեան։ Երեքն էլ այսօր պառկած են հայկական մարտիրոսութեան անծայր գերեզմանցում. առաջինը՝ ընկած Շուշում, թիւրք-հայկական ճակատամարտի մէջ, երկրորդը՝ դաւադիր գնդակի զոհ, թիւրքաց Հայաստանում, երրորդի մահն էլ՝ այժմ ահա ծանուցանում են Բագուի գնդաններից։

Առաջին երկուսը վճռականօրէն պնդում էին statu quo ի վրայ։ Վերջինը—Գնունին—պահանջում էր հրաժարւել թիւրքահայ կուսից և հոգ տանել „սեփական կաշի“ մասին, որ սկսել էր նոյնպէս արիւնոտւել ցարական մտրակի հարւածների տակ։ Կովկասեան յեղափոխութիւնը վաղուան կենդանի իրողութիւնն է — ասում էր Գնունի—քանի որ ծագել է արդէն համառուսական ազատութեան՝ արևը, սոցիալիզմը կազմակերպւում է յեղափոխական դրօշակի տակ և հեռու չէ ցարիզմի հոգեվարքի ժամը...

Դա „նոր հոսանքն“ էր, որ ծայր էր տալիս հայ յեղափոխական, մասնաւորապէս դաշնակցական երիտասարդութեան շարքերում։

Այդտեղ, ժողովում, մենամարտի բռնւեցին երկու շուշեցի երիտասարդները—գրեթէ տակաւին պատանիներ — Գնունեան և Ղամհարեան։ Կծու, անողորմ հակահարւածներ էր ստանում Գնունին իր մտերիմ ընկերից.

„Այդ բոլոր պատրանքները գեղեցիկ են — ասում էր Ժամհարեան — համառուսական ազատութեան արշալոյս, ցարիզմի հոգեվարք. Լայն. բայց մենք պարտաւոր ենք փոքր ինչ աւելի ռէալիստ լինել. մեր ձեռքերով չենք կարող միաժամանակ պատերազմ յայտարարել երկու մեծ բռնապետութեանց. ռուսական կռիւը միայն փաղուան իրողութիւն է, նա տակաւին չի կերպարանաւորւել. ցարիզմը վիթխարի ուժ է, այն ինչ թիւրքիան համեմատաբար շատ աւելի թոյլ, և մենք պարտաւոր ենք ուղղել մեր ձիգերը ամենաթոյլ դիմադրութեան գծով, ես առաւել, որ կան այնտեղ, թիւրքահայ կուսի մէջ, դիւանագիտական երաշխիքներ, կայ մանաւանդ, յաւիտենական սարսափի ու „հոգեվարքի մատնուած մի ժողովուրդ“...

Ճակատագրին հաճելի եղաւ, որ այդ արի ու վառվռուն երիտասարդը նահատակւեր դարձեալ ռուսահայկական կռւի մէջ, ուղիղ վեց տարի այդ խօսքերն արտասանելուց յետոյ, ուղիղ մէկ տարի այն պտոյտից յետոյ, որ նա արել էր բժիշկ Զ.-ի հետ Աբդիւլ-Համիդեան տարտարոսում։ Երկու ընկերները, գաղափարով անջատւած, ի վերջոյ միացան սառը հողի տակ, նոյն կովկասեան հօրիզոններում, նոյն յուսահատ և տանջալի հակացարական պայքարներում։ Գնունին, այդ յիշատակելի պետերբուրգեան ժողովից ի վեր, ասում են, հետզհետէ „ռուսացաւ“, աւելի ճիշտ, „կոսմոպոլիտացաւ“... եղաւ սոցիալդեմոկրատ։ Խզեց կապերը „Դաշնակցութեան“ հետ, խորտ ձուլւեց ռուսական կազմակերպութեան մէջ, հրաժարւիմք ասաց այն բոլոր պարտաւորութիւններին, որոնք կապում են հայ յեղափոխականին, իբրև հայ յեղափոխականի։ Գիտակցաբար թէ անգիտակցաբար նշանաբան արեց կարել Մարքսի ծանօթ խօսքը. „Ich bin Weltbürger“, „ես համաշխարհաքաղաքացի եմ“... մոռանալով, որ Մարքսը իր ծագումով իսկ արդէն համաշխարհաքաղաքացի էր, մի տեսակ անհայրենիք, մոռանալով նաև, որ մարքսիզմը վերջին ժամանակները դարձել է արդէն ջերմօրէն հայրենասէր և ազգապաշտական։ Այնքան մոլեռանդ եղաւ նորադաւան հայ սոցիալ-դեմոկրատը, որ ազգ, հայրենիք, լեզու, ազգային դատ ևայլն հըռչակում էր, իբրև աւելորդ նախապաշարումներ և յայտարարում էր—մի օր, տաք վիճաբանութեան մէջ, ծընեվում, „Դրօշակի“ խմբագրատան—որ իրեն համար միևնոյն է՝ թէկուզ ամբողջ հայութիւնը մահվեղականանայ։ Այդտեղ էր հանում հայ մարքսիստի „ազգայնական անտարբերութիւնը“։

Նոր հոսանքն էր, այո, հայ մտաւորականութեան մէջ, իր տխուր ծայրայեղութիւններով։ Եւ դա ռուսական առանձնայատուկ սոցիալ-դեմոկրատիզմի ներգործութիւնն էր, արևմտեան, եւրոպական սոցիալիզմը վաղուց հրաժարւել է մարքսիզմի այդ նախկին ու հիւանդոտ ծայրայեղութիւններից։ Ռուսներն իրենք այդ աստիճան „պատագրւած“ չեն ազգայնական „նախապաշարումներից“. ընդհակառակը, բուն ռուսական սոցիալ-դեմոկրատները խորապէս հայրենասէր են, բայց մերժում են „հպատակ տարրերի“ յեղափոխականներին՝ նոյն հայրենասիրական դաւանանքը... որպէս զի ըստ կարելւոյն շուտ իրագործւի „մանր ազգերի“ ձուլումը Մայր-Ռուսաստանի ծոցում, և որպէս զի ըստ կարելւոյն շուտ իրականանայ ռուս սոցիալ-դեմոկրատների փայփայած կենտրօնական-պրօլետարական պետութիւնը։

Գնունեանցը կղզիացած չէր իր տարապայման մտայնութեամբ։ Նրա հետ գրեթէ միաժամանակ հրապարակ եկան բազմաթիւ ուրիշ հայ ուսանողներ և ուսանողուհիներ, որոնք տոգորւած ս.-դ.-ական բրօշիւրներով, մնած մակերեսայնօրէն „դասակարգային աւետարանով“, սերտած այդ աւետարանի բոլոր „կախարդիչ“ ֆօրմուլները, արհամարհում անտարբերութիւն էին քարոզում դէպի „բուրժուական նախապաշարումները“,—հայրենիքի գաղափար, ազգային դատ ու լեզու, ազգային աւանդութիւններ...

Անդրադարձէք մի վայրկեան երկու հոսանքների վրայ։

Մի կողմից բուն դաշնակցական երիտասարդութիւնը, որ նւիրւած հարազատ ժողովրդի դատին, ապշեցնում էր հայութիւնը իր հերոսութեան ու անձնուրացութեան թափերով, այնտեղ, հեռու, թիւրքահայկական մարտադաշտերում,—միւս կողմից այդ նորաբողբոջ ու հայաբառբառ սոցիալ-դեմոկրատիան, որ 900-ական թւերի սկզբում հրապարակ էր նետւում անհնարին շռինդով, արհամարհում էր „ազգասէրներին“, յեղափոխական գործիչներին, պարծենում էր ամեն քայլափոխում իր ազգայնական անշահախնդրութեամբ, իր ինքնաբերիկ կոսմոպոլիտիզմով, որ գարշում էր բուն մարտական մեթոդներից, որ ձրգտում էր դէպի լեգալ, կէս-օրինական աշխատանքներ, դէպի խօսքի ու ֆրազի եռանդուն մշակութիւն... Այդպէս էր գրեթէ բոլոր այն երիտասարդների մտայնութիւնը, որ մեծ մասամբ — այո կամ այն պատճառով — դժգոհում ու հեռանում էին „Դաշնակցութեան“ շար-

քերից և որոնք մինչև օրս էլ, իբրև հասարակական-գաղափարական մարմին, քարշ են տալիս մի անպտուղ ու անօգուտ գոյութիւն։

Բացառութիւններ, անշուշտ, կային այդ անհրապոյր դպրոցի մէջ—ողբալի կը լինէր, եթէ բնաւ չը լինէին—և նրանցից էր Գնունեանը։ Մարքսիզմը Ռուսաստանի հողի վրայ ծեռունդ է տալիս երկու տեսակ տիպերի։ Ոմանք բառացի կերպով դիմովանում են վարդապետութեամբ, դառնում են մի մի խանդավառ երկրպագուներ, անհաշտ ու մոլեռանդ, ինչպէս նախնի բրիստոնեաները, բայց և անկեղծ ու յարգելի՝ իրենց ջինջ, գաղափարային յափշտակութեան մէջ։ Եւ նրանք վազում են դէպի գործ, դէպի վտանգ, վազում են առանց յետ նայելու, մի սրբատառուչ հաւատաքով սպառազինուած, — մի հաւատաքով՝ որ թւում է երիտասարդ նորընծաներին, իբրև մի սեսակ տիեզերական համադարման, որ բաւական է քարոզել, որպէս զի աշխարհը տակնու

պաշտութիւնը, որ ընդունակ է մեր երեխաների ծիծաղը շարժել, և՛ համատարած մարդակերութիւնը, որ սրբագործւում էր յաճախ կրօնական հաւատալիքներով, և՛ գերութիւնը, որ ենթարկում էր միլիոնաւոր մարդ-էակների անասնական, զազիր դրութեան, և՛ այն արիւնալի պատերազմներն ու հեկատոմբները, որ լեցնում են մարդկային պատմութիւնը, և՛ այն վիթխարի, դժոխային բուրգերը, կերտուած բիւրաւոր զոհերի դանգերից, որ տիրանները ի ցոյց էին դնում վաղեմի դարերում, իբրև յաղթութեան կոթողներ, և այլն և այլն։

„Ինչ որ իրական է, բանական է", „*Was wirklich ist, ist vernünftig*", այսպէս էր հռչակել փիլիսոփայ Հեգել 19-րդ դարու սկզբում, այսպէս հռչակեց և Սպենսեր... Մոքի երկու տիտաններ, որ օբ'եկտիվիզմի, առարկայական մտածողութեան ամենահզօր ներկայացուցիչներից են։

„Ոչ լալ, ոչ խնդալ, այլ հասկանալ" — ասել է մի այլ տիտան, դեռ 17-րդ դարում, Բարուխ Սպինոզա։ Իսկ հասկանալը—գրեթէ արդարացնել է. *comprendre, c'est excuser*։

Հնարաւո՞ր է արդեօք... Բռնութեան այդ վիթխարի կոթողների առջև, մարդկային անգթութեան արիւնաՀեղ ժեստերի դիմաց, ներքնեան և համիդեան աշխարհադղորդ ոճիրների, կրօնական հաւատաքննութեան զազիր տեսարանների, մասսային ջարդերի ու խարոյկների հանդէպ՝ հնարաւո՞ր է արդեօք պահպանել պաղ, անխռով անդամահատի դիրքը, „ազատ մնալ զգացումների տիրապետութիւնից", թառած մնալ օբ'եկտիվ փիլիսոփայի եթերային բարձունքներում, չը սոսկա՞լ, չ'անիծե՞լ, չ'ըմբոստանա՞լ...

Ոչ, հնարաւոր չէ։

Որովհետև՝ մարդը սոսկ որոճող կենդանի չէ, այլ և բանական ու բարոյական արարած։ Որովհետև նա միայն չի թաւալւում անուժ ու կրաւորական զանգուածի պէս տիեզերական էւոլիւցիայի հեղեղատներում, այլ և աշխողում է երբեմն դուրս գալ ու բարձրանալ յորձանքից, կարողանում է գնահատել անցքերն ու երևոյթները, գնահատել այն չափերի, սկզբունքների, իդէալների տեսակէտից, որ նա ինքն է առաջադրում իր վերլուծող ու համադրող խմացականութեամբ... Եւ ապա նա կարողանում է, համաձայն այդ գնահատութեան, անօրինել իր ընթացքը, հակադրել անցքերի ուղղութեան վրայ, հնազանդեցնել այդ ուղղութիւնը, ըստ կարելւոյն, իր սեփական նպատակների հրամայականին։

Մարդկային այդ սուբ'եկտիվ, ենթակայական ազդեցութիւնը պատմութեան վրայ՝ անվիճելի է։ Օբ'եկտիվ, առարկայական, տարերային հոսանքի մէջ նա մնում է որպէս գործօն, յեղաշրջող ու նպատակաւոր մի ուժ, որ մերթ արագացնում է հասարակական զարգացման սլացքը, մերթ լճացած, ամայացած միջավայրերում ծնունդ է տալիս նոր, թարմացնող կենդանարար հոսանքների։

„Սուբ'եկտիվ" և „օբ'եկտիվ"—լրացուցիչ գործօններ են Զարգացման ընթացքի մէջ, փոխադարձաբար ազդող, խթանող, հրահրող։ Օբ'եկտիվիզմ և սուբ'եկտիվիզմ՝ չեն ներկայանում, որպէս հակամարտ ու տարամերժ հայեցակէտներ, նրանք երկուսն էլ հաւասարապէս անհրաժեշտ են՝ մարդկային պատմութեան յաւերժական պրոցէսը լուսաբանելու համար, նրանք երկուսն էլ, կարելի է ասել, ձուլւում են ու հաշտւում մէկ ներդաշնակ ու մենապաշտ (մոնիստական) աշխարհայեացքի ծոցում։

Ո՞չ, մարդը, խորհող, քննադատող և գիտակից մարդը բնաւ չի հանդիսանում, իբրև անկամ մի խամաճիկ, իբրև անզօր մի տաշեղ ժամանակի յորձանքներում։ Այդպէս երկար քարոզում էր Սպենսերների տարերայնապաշտ օբ'եկտիվիզմը, բայց այդ դաժան ու միակողմանի տեսակէտը այժմ արդէն յաղթահարած է։ Դրա հետ միասին փարատուած է և դողացնող երվիւղը, որ անխուսափելի հետևանք է այդ „տարերային" Մեկնութիւնների... երկիւղ՝ որ մարդը դատապարտուած է յաւէտ ստրկօրէն քարշ տալու բնութեան երկաթէ, „անդիմադրելի" օրէնքները. երկիւղ՝ որ օրգանաւոր տիեզերքը իր „ընտրութեան" (*sélection*) օրէնքով ու „գոյութեան կռիւ" անողոք հրամայականով պիտի յաւէտ ծաներանայ հասարակութիւնների ճակատագրի վրայ, պիտի յաւէտ ղեկավարէ նրանց շարժումն ու զարգացումը, պիտի մատնէ ժողովուրդները արիւնոտ մրցակցութեան քմահաճ պատահարներին, պիտի յաւերժացնէ մարդկանց անհաւասարութեան պատուհասը, հարստի ու աղքատի ոճրանիւթ հակադրութիւնը, թոյլերի ու հզօրների յուսահատ մենամարտը, մէկերի բարձրացումը, միւսների բնաջնջումը, մէկերի խրախճանքը, միւսների հեծեծանքը...

Դեռ կան այսօր ևս Արևմուտքում այդ դաժան օբ'եկտիվիզմի բազմաթիւ ջատագովներ, „դարվինական-սոցիոլոգներ", որ հակած են ենթարկելու մարդկութեան զարգացումը տիեզերական զարգացման օրէնքներին, բացատրելու հասարակական երևոյթները զուտ բնական ու կենսաբանական պատճառներով։ Դրանք մեծ մասամբ, գրեթէ բոլորը, պատկանում են—ինչպէս արդէն բացատրեցինք մեր նախորդ յօդուածներում — բուրժուական, առանձնաշնորհեալ դասակարգերին, որոնց հաճելի է սրբագործել գիտութեան խօսքով „բնական կարգը", հաճելի է կոչ անել „տիեզերական գոյամարտի" օրէնքներին՝ յաւիտենականացնելու համար անհաւասարութեան ու առանձնաշնորհման ռէժիմը երկրագնդի վրայ...

Գոյութեան կռիւը — ո՞վ կարող է ժխտել այդ — անվիճելի իրողութիւն է թէ բուսական-կենդանական և թէ մարդկային հասարակութիւնների մէջ։ Շատ ժողովուրդներ և պետութիւններ հինաւուրց ժամանակներում ջնջւել են, անդունդ գնացել, չը կարողանալով պատասխան տալ դարվինեան անողոք „գոյամարտի" օրէնքին։

Բայց այդ օրէնքը—որի կիրառման միւս խոշոր անպատեհութիւնները տեսանք արդէն նախորդ յօդուածներում—շատ է ընդհանուր, տարտամ, առաձգական։ Կարելի է ասել, նա օրէնք է նոյնիսկ անշունչ, անօրգան տիեզերքի, նա մղւում է և ինքնա, անշարժ նիւթի սահմաններում, արեգնային բոլոր համակարգութիւնների մէջ։ Կռիւ կայ ամենայետին ատոմների ու մոլեկուլների միջև։ Եւ այսօր նոյնիսկ ընդարձակ հատորներ են լոյս տեսնում „Տիեզերական կռիւ", *Lutte Universelle* խորագրով։ Այդ առաձգականութեան ու անորոշութեան

պատճառով իսկ՝ գոյութեան կռիւ օրէնքը չի պատշաճում, իբրև մարդկային պատմութեան օրէնք։ Եւս առաւել՝ որ ներկայումս գոյութեան կռիւ հանդէպ ձևակերպւում ու ցցւում է ոչ պակաս հզօր ու ազդու հակոտնեայն—համերաշխութեան օրէնքը։

Վերջին ժամանակները, սակայն, միշտ աւելի և աւելի բազմանում են քննադատող հարուածները սպենսերիզմի կամ „օրգանական թէօրիայի“ դէմ. շեշտւում են տարբեր թէօրիաներ, որոնք տուզում են թօթափել բնութեան լուծը, հեռացնել բնական ազդակների միահեծան ու տարաժերջ ներգործութիւնը և բացատրել հասարակական զարգացումը հասարակական պատճառներով։

Այդ զուտ հասարակագիտական թէօրիաների շարքում կայ մեկը, որ 15—20 տարիներից ի վեր ճանաչ պարհ է հարթում գիտութեան մէջ, հրաւիրելով իր վրայ չատ թէ քիչ լայն շրջանների ուշադրութիւնը։

Մեր խօսքը „Տնտեսական Մատերիալիզմի“ մասին է որ կոչւում է նաև պատմական, դիալեքտիկական մատերիալիզմ։ Տարերայնապաշտ „Օբ'եկտիվիզմի“ մի այլ տեսակն է դա, որ հարկ է ցուցադրել շատ թէ քիչ ընդարձակօրէն և քննադատել մեր ծանօթ ըմբռնումի տեսակէտից — եւս առաւել, որ նա ունի այսօր մեծ այժմէութիւն ու տարածում։

Նոր չէ և այդ թէօրիան։ Կարլ Մարքս ձևակերպել է այն՝ դեռ անցեալ դարու քառասնական թուականներին, սակայն մինչև վերջին ժամանակները նա, այսպէս ասած, սեփականութիւն էր միայն որոշ կուսակցութեան և չունէր ընդունելութիւն զուտ գիտական շրջաններում։

Ինչպէս անունն իսկ մատնում է արդէն, այդ թէօրիան փորձում է մեկնաբանել մարդկութեան պատմութիւնը, նրա դարաւոր վերիվայրումներն ու յեղյեղումները ոչ թէ բնական կամ օրգանական (բոյս-կենդանական), այլ զուտ հասարակական օրէնքներով։ Վերջինների մէջ՝ նա զատում է առանձնապատճառները և տալիս է նրանց առաջնակարգ եզակի կարևորութիւն, հռչակում է նրանց՝ որպէս միակ խթան-ազդակ, որ գանւում է բոլոր այլազան երևոյթների հիմքում և որ առաջ է մղում համաշխարհային պատմութիւնը։

Տնտեսական ազդակների վրայ ծանրանալով, Մարքս էապէս նոր բան չ'ասաց, այլ միայն ձևակերպեց ու ընդհանրացրեց իր հուժկու և հմայադրող ուղեղով, մտքի այն բոլոր բեկորները, որոնք խօսել էին այդ կարգի ազդակների մասին, մինչև Մարքսի երևան գալը։ Խօսել էին տնտեսական գործօնների դերի մասին 18-րդ դարում՝ Մոնտեսկիո, Հերդեր և ուրիշներ, խօսել էին աւելի յստակ ու որոշ, 19-րդ դարասկզբում՝ Գրանսիական պատմագիրները, Տիերրի, Գիզո ապա և Լուի Բլան։

Կարլ Մարքս ուսումնասիրեց այդ վերջիններին, իմացաւ նրանցից, որ Ֆրանսիայի քաղաքական պատմութիւնը միջին դարերից ի վեր դիտելի է, որպէս մշտնջենաւոր պայքար երկու մեծ դասակարգերի՝ ֆէոդալականութեան ու բուրժուազիայի՝ միջև։ Եւ նա տարածեց դասակարգային պայքարի ըմբռնումը ամբողջ համաշխարհային պատմութեան վրայ. յայտարարեց, դրանով իսկ, որ այդ պատմութիւնը առաջ է մղւում տնտեսական, նիւթական պատճառներով, դասակարգային շահերի յաւիտենական բաղխումներով։ Իր շատ ուրիշ նշանաւոր ժամանակակիցների պէս, Մարքսը ևս—դեռ պատմագիտական այդ ուսումնասիրութիւններից առաջ—յափշտակւել էր Հեգելի թովիչ փիլիսոփայութեամբ, որ և տուեց նրան հետազօտութեան իր մեթոդը։ Կարլ Մարքս որդեգրեց այն հարազատութեամբ և կիրառեց պատմութեան փիլիսոփայութեան մէջ։ Նա չը հետևեց իր ուսուցչին՝ իդէալիստական բարձրաչալց մարզանքների ասպարեզում, նա երես դարձրեց Հեգելեան անոսկր, անխարիսխ բանդագուշանքներից, „Գաղափարի ինքնազարգացում“ից դուրս, „համաշխարհային Ոգու“ քմահաճ շարժումներից. նա կամեցաւ — իբրև ռէալիստ, իրապաշտ մտածող—գնել աշխարհը իր ոտքերի վրայ. նա մի խօսքով, հրաժարուեց իդէալիզմից և զարնուեց մատերիալիզմի, նիւթապաշտութեան մէջ։

Եւ մինչդեռ Հեգել դուրս էր բերում պատմական շարժման օրէնքները „բացարձակ գաղափարի ինքնազարգացումից“, Մարքս —ենթարկուելով Հեգելեան ձախակողմեան դպրոցի, մասնաւորապէս Փոյերբախի ազդեցութեան — յայտարարեց, որ գաղափարները չեն շարժում մարդկային պատմութիւնը, այլ որ մարդն ինքն է ստեղծում գաղափարները։

Փոյերբախն արել էր արդէն նոյն ուշագրաւ յայտարարութիւնը կրօնի առթիւ։ Նա արտասանել էր իր պատմական ֆրազը. *Der Mensch macht die Religion, die Religion macht nicht den Menschen...* „Մարդն է ստեղծում կրօնը և ոչ կրօնը մարդուն“...

Փոյերբախ ասել էր „Քրիստոնէութեան էութիւնը“ խորագրով իր անմահ աշխատութեան մէջ, որ մեր կրօնական երևակայութեան ստեղծագործած բարձր էակները սոսկ ֆանտաստիկական արտացոլումներն են մեր սեփական, մարդկային էութեան“։

Եթէ այդ այդպէս է, եթէ մարդն ինքն է արտադրել կրօնական էակներն ու գաղափարները, ապա—հարցնում է Մարքս—ինչո՞ւ չ'ասել, որ նոյն մարդու ուղեղը արտադրել է և բոլոր միւս գաղափարները՝ բաղաքական, իրաւական, բարոյական, գիտական, գեղարուեստական և այլն։

Եւ նա յանգում է դրական եզրակացութեան։ Բոլոր այլազան գաղափարները, ամբողջ այսպէս կոչուած „իդէօլոգիան“, գաղափարաբանութիւնը մարդկային արտադրութիւն է։ Մարդկային ուղեղի արդիւնք են և բոլոր քաղաքական, իրաւական, էթիկական հաստատութիւնները։

Բայց ի՞նչ օրէնքների տիրապետութեան տակ, ի՞նչ տեսակ ազդակների մղումով է, որ արտադրւել են այդ բոլոր գաղափարները։ Նրանք, հարկաւ, չեն ծնւել ինքնաբերաբար կամ մի հրաշագործ ներշնչումով։

Այդ այդտեղ է, որ Մարքսին օգնութեան են գալիս ֆրանսիացի պատմագիրները իրենց տնտեսական մեկնաբանութեամբ։ Այդտեղ նա վճռականապէս խզում է Հեգելի հետ և բացատրում է պատմութիւնը նիւթական, տնտեսական գործօնների տիրական ազդեցութեամբ։ Բայց նա պինդ գրկեց Հեգելի դիալեկտիկական մեթոդը։

Տնտեսական պատճառների մշտնջենաւոր գործի տակ՝ համաշխարհային պատմութիւնը ապրած է մղւում։ Հեգել

լեան „հակադրութիւններով“։ Հակադրութիւնը առաջապար ուժն է—*der Widerspruch ist das Fortleitende*—ասել էր Հեգել։ Եւ իդէալիստ փիլիսոփայի այդ ինքնատիպ յղացումը դարձաւ Մարքսի սիրեցեալ բանաձևը, նրա բոլոր տեսական մարզումների հոգին։ Պատմութիւնը, ինչպէս և ամբողջ աշխարհը, շարժւում ու կերպարանափոխւում է ներքին ուժեղ հակասութիւնների զօրութեամբ։ Ոչինչ չը կայ յաւիտենական, կայուն, անսասան. յաւիտենական է միայն փոփոխման պրոցէսը, լինելութիւնը, էւոլիւցիան իր համայնաջինջ դիալեկտիկական օրէնքներով։

Ամբողջ պատմութիւնը զարգացման մի անհատնում պրոցէս է։ Այդ է, ըստ Մարքսի, Հեգելեան վարդապետութեան յեղափոխական բնոյթը։

Եւ մոլեռանդ աշակերտը սիրով, խանդավառութեամբ հոլովում է ամենուրեք թեզի, անտիթեզի, սինթեզի եռաստիճան, դիալեկտիկական բանաձևը, որի կամայական ու բռնազբօսիկ կիրառումները տեսնում ենք արդէն ուսուցչի մօտ *)։

„Ամեն ինչ տրւում ու բացասւում է։ Բայց ի տեղի ջնջելու, անհետանալու՝ երևոյթները, ընդհակառակը, զարգանում են, կատարելագործւում, ընթանում են դէպի աւելի բարձր ձևեր։ Այո՝ն դառնալով ոչ, ոչը—այո, այո՝ն դառնալով միանգամայն այո և ոչ, ոչ՝ը միանգամայն ոչ ու այո,—հակադրութիւնները հաւասարակշռում են, իրարու չեզոքացնում, անդամալուծում. երկու հակասական մտքերի ձուլումը կազմում է մի նոր միտք, որ այդ երկուսի սինթեզն է, համադրութիւնը. այդ նոր միտքը առաջ է մղւում, ցուցադրելով երկու նոր հակասական մտքեր—դրութիւն ու հակադրութիւն—որոնք նոյնպէս ձուլւում են մի նոր անտիթեզի, համադրութեան մէջ։ Ծննդաբերական այդ աշխատանքից առաջ է գալիս մտքերի մի նոր խմբակցութիւն։ Այդ վերջինն ևս իր հերթին հնազանդւում է նոյն եռաստիճան, դիալեքտիկական շարժման օրէնքին։ Առաջ են գալիս այլ սինթեզներ, մտքերի այլ խմբակցութիւններ“ և այլն և այլն (*K. Marx: La Misère de la Philosophie*)։ Նոյն օրէնքին են ենթարկւում բնա-

*) Տիեզերական շարժումը, ըստ Հեգելի, ընթանում է դիալեքտիկական ռիթմով, եռաստիճան չափաբերութեամբ։ Թեզ, անտիթեզ, սինթեզ։ Դրութիւն, հակադրութիւն, համադրութիւն։ Ամեն մի իր, ամեն մի միտք պարունակում է իր հակադրութիւնը կամ անտիթեզը, նա միանգամայն հաստատութիւն է և բացասութիւն։ Ամեն մի առարկայ՝ դրւելով կամ հաստատւելով (թեզ, դրութիւն)՝ միաժամանակ ժխտում է ինքզինքը (անտիթեզ, հակադրութիւն), բայց այդ ժխտմամբ նա չի ջնջւում, չի անհետանում, այլ միայն ձևափոխւում, դառնում է մի նոր առարկայ՝ մի աւելի բարձր իրականութիւն, աւելի բարդ ու հարուստ, որ կոչւում է սինթեզ կամ համադրութիւն։ Այդ նոր իրականութիւնը իր հերթին՝ հաստատւելով՝ նմանապէս ժխտւում է, առաջ է գալիս նոր սինթեզ և այդպէս անվերջ։

Ահա Հեգելեան հռչակաւոր ռիթմը։ Այդ եղանակով է կատարւում, իդէալիստ փիլիսոփայի կարծիքով, տիեզերական էւոլիւցիան սկսած իր սկզբնական չուկէտից։ Երբ գաղափարը կամ Տիեզերական Ոգին (*Idée, Weltgeist*) գոյութիւն ունէր սոսկ կարողական վիճակում, պարզ, ջինջ, եթերային ու անբովանդակ գոյութեամբ և այդպէս շարունակւում է „զարգացումը՝“—դրութեամբ, հակադրութեամբ, համադրութեամբ—անցնելով միշտ վերացականից դէպի կոնկրէտն ու շօշափելին, անորոշից դէպի որոշը... մինչև որ նա հասնում է իր ժամանման կէտին, երբ գաղափարի զարգացումը յանգում է իր բացարձակ կատարելութեան, երբ նա դառնում է բացարձակ, համայնապարփակ ճշմարտութիւն—գերագոյն արգասիքը տիեզերական կերպարանափոխութեան։

Մարդկային պատմութիւնը այդ ընդարձակ էւոլիւցիայի, այդ վերխարի շղթայի մէկ օղակն է և բարձրագոյն օղակներից մինը։ Այդպէս է ասում Հեգել։ Սակայն մենք չենք գտնում այդ մեծ ու գաղափարապաշտ փիլիսոփայի մօտ պատմական էւոլիւցիայի բանաւոր մեկնաբանութիւն, տեսնում ենք, ընդհակառակը, մի շարք խոշոր վրիպումներ, իրականութեան խեղաթիւրումներ։ Մեղաւորը, հարկաւ, նրա ամբողջ փիլիսոփայական սիստեմն էր և նրա հետազօտութեան մեթոդը։ Սիստեմը մի հոյակապ պատրանք էր, մեթոդը—բռնազբօսիկ, կամայական մի յօրինուածք։ Հեգել թւարսում էր իրականութիւնը, գնում էր այն՝ գլխիվայր։ Առաջին, ամենանախնական գոյութիւնը նրա համար՝ Գաղափարն էր, բանականութիւնը և նրանից իբր թէ առաջացել է աստիճանաբար տիեզերքը, մարդկութիւնը և այլն։ Մեզ համար առաջին իրականութիւնը ինքը նիւթական տիեզերքն է, որ զարգացել, բնաշրջւել է դարերի անհունութեան մէջ և որից առաջացել են աստիճանաբար կեանքը, գիտակցութիւնը, միտքը, բանականութիւնը։

Նախնական բացարձակ Գաղափարը (*die absolute Idee*), որ ըստ Հեգելի միանգամայն „ի՝ն չ“ է և „Ո չ՝ի՝ն չ“ (*Sein und Nicht—Sein*), դատարկութիւն, անէութիւն և որ սակայն կրում է իր մէջ—այդ դատարկութեան ծոցում իսկ—պօտէնցիէլ, կարողական վիճակի մէջ՝ ամբողջ շօշափելի տիեզերքը, դա ինքն ըստ ինքեան տրամաբանական մի անհեթեթութիւն է, մի մարմնացած հակասութիւն։ Դա մի տեսակ արարչագործութիւն է *ex nihilo*, Ո չ՝ն չ՝ի ց։

Եռաստիճան ռիթմը իմացականութեան հակասական մի խաղ է։ Կարելի է, անտարակոյս, գտնել բնութեան, պատմութեան և զուտ մտքի, տրամաբանութեան աշխարհում բազմաթիւ օրինակներ, ուր կիրառելի են Հեգելեան եռաստիճան բաժանումները, „դիալեքտիկական“ թեզը, անտիթեզը և սինթեզը, սակայն այդ չի նշանակում, թէ նրանք կիրառելի են հաւասարապէս ամեն տեղ, բնական ու պատմական էւոլիւցիայի բոլոր վայրկեաններում։

Նոյն եռաստիճան ֆորմուլին հետևելով՝ իդէալիստ փիլիսոփան բաժանում է մարդկային պատմութիւնն ևս երեք մեծ շրջանների.

1. Արևելեան
2. Յոյն-հռոմէական
3. Գերմանական կամ Արևմտեան։

„Բացարձակ Ոգին մեկնում է Չինաստանից, շարժւում է Հնդկաստանի, Պարսկաստանի վրայով դէպի Եգիպտոս, անցնում է Յունաստան, այնտեղից Հռոմ, ապա Գերմանիա... երբէք չը բնակւելով երկու անգամ միևնոյն վայրում և երկու վայրում միևնոյն ժամանակ։ Առաջին շրջանը—արևելեանը—թեզիան է, դրութիւնը, երկրորդը՝ անտիթեզիան է, հակադրութիւնը, երրորդը՝ սինթեզն է, համադրութիւնը։

Պատմութեան վերջնական նպատակը լինելով ազատութիւնը՝ առաջին շրջանը այդ ազատութեան տեսակէտից դեռ ոչինչ է կամ գրեթէ ոչինչ. դա արևելեան բացարձակ բռնապետութիւնն է, ուր ժողովրդային զանգուածները դեգերում են անասնական հոյլ անշարժութեան մէջ, ուր չկայ մտածողութիւն, կամք, գիտակցութիւն, ուր մ է կ ն է մ ի ա յ ն ա զ ա տ, այն է, միահեծան թագաւորը։ Չինաստանը այդ շրջանի ամենատիպիկ նմուշն է։ Դրա համար և Հեգել ընտրում է այդ պետութիւնը, իբրև չուկէտ իր պատմական էւոլիւցիայի, իր եռաստիճան ֆորմուլի։

Երկրորդ շրջանը՝ յոյն-հռոմէականն է։ Այդտեղ մարդկային անհատականութիւնը, ոգին, գիտակցութիւնը սկսում են արթնանալ, սթափւել, ճանաչել իրենց իրաւունքները։ Բայց այնուամենայնիւ, այդտեղ չի հասնում լիակատար ազատութիւնը. այդտեղ ազատ են դեռ ոչ բոլորը, այլ միայն մ ի ք ա ն ի՝ ց։

կան ու հասարակական բոլոր երևոյթները, ամբողջ տիեզերքը։ Դրութիւն, հակադրութիւն, համադրութիւն... Թեզ, անտիթեզ, սինթեզ։ Իւրաքանչիւր մի առարկայ, մի հաստատութիւն, մի երևոյթ, ժամանակի որոշ վայրկեանում, կրում է իր արգանդի մէջ իր հակասութիւնը (անտիթեզը). նա „այն է“ և „այն չէ“... Որովհետև իւրաքանչիւր մի վայրկեան իրերն ու երևոյթները ենթակայ են փոփոխման, յեղաշրջման, էվոլիւցիայի։

Ահաւասիկ ձախակողմեան աշակերտների վերսկսած խաղը։

Ամեն ինչ մարդկային պատմութեան մէջ, վերածւում է, ըստ Մարքսի, տնտեսութեան, որպէս միակ պատճառական աղբիւրին, որից իբր թէ բղխում են մնացած բոլոր հասարակական երևոյթները։ Ամեն մի հասարակութեան մէջ, պատմական մի յայտնի վայրկեանում՝ տնտեսական կազմը, այսինքն արդիւնագործութեան, բաշխումի, փոխանակութեան ձևը, սեփականատիրական յարաբերութիւնները հանդիսանում են որպէս խարիսխ, այն ինչ բոլոր միւս հաստատութիւններն ու երևոյթները—քաղաքական, իրաւական, բարոյական, կրօնական, գեղարուեստական, գիտական, փիլիսոփայական—կազմում են իբր թէ մի տեսակ վերնաշէնք (*Ueberbau*) այդ տնտեսական խարիսխի վրայ։ Ամեն բան կախուած է աշխատանքի, արդիւնագործութեան ձևից, կախուած է նրանից՝ թէ ինչպէս, ի՞նչ միջոցներով ու գործիքներով են մարդիկ հայթայթում իրենց ապրուստը։ (որսորդութիւն, խաշնարածութիւն, երկրագործութիւն, մանր ձեռագործ արդիւնագործութիւն, արհեստներ, խոշոր մեքենային արդիւնաբերութիւն և այլն և այլն)։

Աշխատանքի այդ տարբեր կազմակերպութիւններին, արդիւնագործութեան այդ տարբեր ձևերին համապատասխանում է և տարբեր „իդէօլոգիա“, գաղափարաբանութիւն, տարբեր իրաւական, բարոյական, կրօնական, քաղաքական, գեղարուեստական ու փիլիսոփայական հասկացողութիւններ։ Այդ վերջինները սոսկ հետևանքանդրադարձումն են տնտեսական կազմակերպութեան։ Պատմական բոլոր իրողութիւնները—մտաւոր, քաղաքական, կրօնական և այլն—ինքնին երկրորդական արժէք ունին, նրանք ծնունդ են, արտացոլումն տնտեսական իրողութիւնների։ Տնտեսական ազդակը—տէր է, հրամանատար, բոլոր միւսները—սոսկ ծառայ, սպասաւոր։ Ցաճախ մարդիկ — այս կամ այն մեծ վերանորոգիչը—գործում են ըստ երևոյթին յանուն այս կամ այն կրօնական, բարոյական, իրաւական գաղափարի, յանուն որևէ իդէալի, բայց իրօք նրանք գործիք են հանդիսանում—անգիտակցաբար, առանց իրենց հաշիւ տալու—տնտեսական մի դասակարգի,

---

Երրորդ շրջանում, վերջապէս (արևմտեան Եւրոպայում), ըստ Հեգելի ազատ են բոլորը։

Թեզ, անտիթեզ, սինթեզ...

Սակայն, ահա թէ որտեղ է այդ բառախաղի անհաշիւ կամայականութիւնը։ Ինչպէս տեսանք, Հեգելի մտ պատմութիւնը սկսւում է արևելեան պետութիւններով և ամենից առաջ Չինաստանով։ Այդտեղ է իբր թէ կազմակերպւել պետութեան գաղափարը, որից դուրս Հեգելի համար չը կայ պատմութիւն։ Չինաստանը, նրա ասելով, համապատասխանում է մարդկութեան մանկական հասակին, ինչպէս որ Գերմանիան — ծերութեանը։ Բայց Չինաստանից առաջ, և շատ առաջ, կար, ապրում էր անհաշիւ դարերից ի վեր, երկրագնդի այլ և այլ ծայրերում միլիոնաւոր մարդկութիւն, ապրում էր մանր-մունր հօրդաներով, տոհմերով ու ցեղերով, նահապետական, մայրապետական գերդաստաններով։ Այդ մարդկութիւնը, այդ շրջանը չի հետաքրքրում Հեգելին։ Եւ սակայն, այդ վայրենութեան ու բարբարոսութեան դարերը անհրաժեշտ նախաստիճաններն են մարդկային էվոլիւցիայի. նրանցից է ծնւել քաղաքակրթութիւնը։ Հեգել չի զբաղւում դրանցով, նա յօշոտում է մարդկութեան զարգացման պրոցէսը, կամայականօրէն դուրս է նետում նրա ծոցից մի ահագին ու ուշագրաւ հատուած, որովհետև այդ հատուածը չի իրականացնում Հեգելեան պետութեան գաղափարը և որովհետև նա չի մտնում եռաստիճան ֆորմուլի շրջանակները, չի յարմարւում այդ ֆորմուլի պահանջներին։ Պէտք է „սկսել“ անպատճառ Չինաստանով և վերջացնել Գերմանիայով, քանի որ այդ շրջանում միայն հնարաւոր է կիրառել փիլիսոփայորինած ինքնատիպ բանաձևերն ու բառերը։ Սակայն, ո՞րի պիսի մոլորութիւն։ Չինաստանը (Հեգելեան թեզիսը) չի ներկայացնում մարդկութեան մանկութիւնը և պատմական էվոլիւցիան չի վերջանում Գերմանիայով։ Շա՞տ հեռու է այդ մանկութիւնը, թաղուած պատմական ու նախապատմական խաւար դիշերի մէջ։ Շա՞տ հեռու է և պատմութեան վախճանական հանգրւանը, խորասուզուած անվերջութեան մշուշներում։ Մարդկային պատմութիւնը, կարելի է ասել, դեռ նոր է սկսում։ Դեռ չը կայ էլ համամարդկային քաղաքակրթութիւն, բառիս ճշգրիտ իմաստով, դեռ ո՞չ է երկրագնդի մէկ ու կէս միլիարդ մարդկութիւնը։ Նրա մի փոքրիկ բեկորն է միայն ուր կոխել ճշմարիտ քաղաքակրթութեան շէմքի վրայ։ Հակայական, հարիւր-միլիոնաւոր ժողովուրդներ — Չինաստան, Հնդկաստան, Աֆրիկա, Աւստրալիա—դեռ ապրում են ընդհանուր առմամբ կիսավայրենի վիճակի մէջ։ Նրանք չեն, սակայն, դատապարտուած յաւիտենօրէն դեգերելու այդ „մանկական“ կամ սաղմնային հասակում, ինչպէս կուզէ ազդարարել Հեգելեան պատմա-

---

փիլիսոփայութիւնը։ Նրանց բոլորին վիճակուած է սթափւել, վաղ թէ ուշ, բարձրանալ կուլտուրական սանդուխով, տեղ բռնել քաղաքակիրթ ազգութիւնների գերդաստանում։

Սխալ ու կամայական է նաև Հեգելի յայտարարութիւնը՝ իբր Գերմանիան իր պետական կազմակերպութեամբ—այն էլ Հեգելեան ժամանակների Գերմանիան (դիալէքտիկական „սինթեզը“) իրականացրել է արդէն պատմութեան նպատակ-իդէալը՝ բոլորի կատարեալ ազատութիւնը... Այդտեղ, քաղաքական խորհրդածութիւնների աշխարհում, մեծ փիլիսոփան ցոյց է տալիս մի բացայայտ ու ողբալի կարճատեսութիւն. այդտեղ բացարձակ փիլիսոփայական իդէալիզմը վերածւում է կոպիտ ու գռեհիկ ռէալիզմի, իրապաշտութեան։ Գերմանիան, աւելի ճիշտ, Պրուսսիան, ոչ թէ իդէալ-ազատամիտ Պետութիւնն էր այլ ազատութեան ու մարդկայնութեան բացասումը, — մի ահագին զօրանոց, ուր անմունջ մարզւում էին հարիւր հազարաւոր մարդիկ՝ ապագայում զոհւելու համար պետութիւնկուռքին, աւելի ճիշտ՝ մի չնչին, աւատական փոքրամասնութեան ախորժակներին։

Ահա թէ որքան հեռու էր Հեգել պատմական ճշմարտութիւնից, ահա թէ ինչպէս խեղաթիւրում էր նա պատմութեան ընթացքը, իր դիալէքտիկական ֆորմուլներով։ Նրա սիստեմը մի հոյակապ բանաստեղծական կառուցուածք էր, անընդունակ պատասխանելու մարդկային պատմութեան բազմադարեայ զարգացման ամենահիմնական խնդիրներին։ Հեգել սահում էր այդ խնդիրների մակերևոյթից, կիրառում էր ամենուրեք եռաստիճան բանաձևը—թեզ, անտիթեզ, սինթեզ—շռայլում էր ամենուրեք բառերն ու ստորոգելիները, առանց սակայն թափանցելու մարդկութեան վերխարի և չարատանջ կնճիռների էութեան մէջ։

„Դիալէքտիկի“ նոյն ամուլ ու մակերեսային մարգանքները վերսկսեցին պատմութեան փիլիսոփայութեան մէջ՝ Հեգելի երկու ծայր-ձախակողմեան աշակերտները, Կարլ Մարքս և Էնգելս, որոնք և յօրինեցին տնտեսական կամ պատմական մատերիալիզմի թէօրիան։

իրօք նրանք յայտնուում են դրօշակակիր-թարգման այս կամ այն անտեսական պահանջի, „հրամայականի“։

Գարիբալդի և Մաձձինի ծածանեցնում են հայրենիքի ազատագրութեան դրօշը, խօսում ու գործում են ամբողջ իտալական հայրենիքի անունից, բայց իրօք անգիտակից գործիքներ են որոշ—բուրժուական—դասակարգի։

Լուծերը պատերազմ է յայտարարում յանուն մի դօգմի, կրօնական հաւատամքի, բայց իրօք նա թարգմանն-ներկայացուցիչ է գերման բուրժուազիայի, որ կուում էր պապական Հռոմի սանձարձակ կեղեքումների դէմ։

Եօհանն Հուսի շղթայազերծած ամբողջ շարժումը ոչ այլ ինչ էր, բայց եթէ հակամարտութիւն ու կռիւ չեխ աշխատաւորների և Բօհեմիայի իշխող դասակարգերի միջև։ Այդպէս է լուսաբանում անցքերը՝ կարլ կաուցկի, իր խոշոր աշխատութեան մէջ (*Geschichte des Sozialismus, die Vorläufer*...), ուր վարպետ ձեռքով գծում է սոցիալական շարժումների պատմութիւնը Միջնադարում։ Այդպէս և—Յիսուսի, Մովսէսի, Բուդդայի, Մահմեդի, բոլոր առաքեալների ու վերանորոգիչների պատմութիւնները։ Նման եղանակով բացատրւում են և փիլիսոփայական ու հոգեբանական այլևայլ հոսանքները։ Ամեն բան վերածւում է նոյն հիմնական աղբիւրին — տնտեսականին, նիւթականին։ Ամբողջ քաղաքակրթութեան էւոլիւցիան լուսաբանւում է „մոնիստօրէն“, մէկ միայնակ երևոյթի, տնտեսականի, էւոլիւցիայով։ Այդ պատճառով և թէօրիան կոչւում է անտեսական մատերիալիզմ։

Տնտեսական ձևերը փոփոխելով՝ փոփոխւում են և բոլոր միւս ձևերը, ամբողջ քաղաքական, հասարակական կազմակերպութիւնը։ Իսկ տնտեսական ձևերի փոփոխումը կատարւում է դասակարգային հակամարտութեամբ, պայքարով։ Ամբողջ մինչայսօրեայ պատմութիւնը կազմւած է իբր թէ այդպիսի դասակարգային պայքարներից։ Ստրուկ և տէր, ճորտ և աւատական, պրոլետար և բուրժուա — ահա հակադիր և հակամարտ երևոյթները, որոնցով շարժւում է պատմութիւնը, խթանւում է հասարակային պրոգրէսը, առաջադիմութիւնը։

Դասակարգային այդ հակամարտութիւնն ու պայքարը ժամանակի ընթացքում փոփոխում է իր ձևերը։ Իւրաքանչիւր մի տնտեսական կազմ զարգացնում է իր մէջ արդիւնաբերական այնպիսի ուժեր, որոնք աճելով, ի վերջոյ դառնում են անհաշտելի ամբողջ հին հասարակակարգի հետ։ Սրւում են դասակարգային յարաբերութիւնները, վրայ է հասնում տագնապը, որ լուծւում է՝ կամ իշխանութեան փոխադրութեամբ մի դասակարգից դէպի միւսը, կամ թէ ամբողջ հասարակութեան կործանումով։

* * *

Բոլոր պատմական ու փիլիսոփայական թէօրիաների մէջ կայ ճշմարտութեան մի յայտնի բաժին։ Ճշմարտութիւնը, ինչպէս ամեն բան, աճում է, առաջադիմում քայլ առ քայլ, աստիճանաբար, գտնելով իր անբաժան մասնիկները յաջորդաբար երևան եկող վարդապետութիւնների ու թէօրիաների սահմաններում։ Մենք կ'ասենք, որ մարքսեան թէօրիան ևս պատմութեան մատերիալիստական ըմբռնումի մասին՝ պարունակում է մեծ, անժխտելի մի ճշմարտութիւն։

Նախ՝ նա մի փրկարար ռէակցիա էր, հակազդեցութիւն այն մի շարք թէօրիաների դէմ, որոնք բղխելով կրօնագէտ մտածողների, իրաւաբանների, գրողների, վիպասանների ուղեղներից՝ ծանրանում էին սոսկ այսպէս կոչւած ի դէ օ լ օ գ ի ա կ ա ն գործօնների վրայ, բացատրում էին համաշխարհային պատմութեան ընթացքը կրօնական, իրաւական, քաղաքական պատճառներով, գտնում էին պատմութեան խորունկ արգանդի մէջ, որպէս հիմնական, մղիչ-ազդակներ՝ կրօնի փոփոխումները, քաղաքական կարգերի յաջորդութիւնը, գիտութեան ու փիլիսոփայութեան առաջխաղացութիւնը, յաճախ նոյնիսկ մեծ մարդկանց, հերոսների ոգին, նրանց առաջատար ուժը և այլն։ Միանգամայն անտեսւած, արհամարհւած էր մարդկային գոյութեան ամենահիմնական, ամենատարածւած ազդակը—տնտեսականը։ Ոչ կրօն, ոչ գիտութիւն, գրականութիւն ու փիլիսոփայութիւն, ոչ կառավարութեան և իրաւունքի ձևեր,— ոչ մէկը այդ բազմապիսի պահանջներից չունի այն հզօր ու հրամայական բնոյթը, չունի այն հանուր, համաշխարհային ազդեցութիւնը, որ ունի սնելու և արտադրելու պահանջը։ Առանց կրօնի ու պաշտամունքի, առանց մտաւոր ու գեղարւեստական ստեղծագործութեան՝ ապրել կը լինի, բայց առանց սնունդի, աշխատանքի ու արդիւնագործութեան — ապրել չի լինի... Նիւթական խորժակներն ու մահոգութիւնները ամենաուժեղներն են... Մի չաֆազանց պարզ ու տարրական ճշմարտութիւն է դա և սակայն երկար ժամանակ նա դուրս էր վտարւած գիտականների պատմափիլիսոփայական տեսակէտներից։ Ստամոքսի „գուեհիկ“ փիլիսոփայութիւնը չէր հետաքրքրում այդ վեհապանծ մետաֆիզիկներին և նրանք սիրով սաւառնում էին հոգևորի ու վերացականի եթերային բարձունքներում։ Կարլ Մարքս պատկառելի ծառայութիւն մատուցեց պատմութեան փիլիսոփայութեանը, շեշտելով այդ արհամարհւած ու մոռացւած, այդ „պրօզայիկ“ գործօնի վրայ...

Նիւթական-տնտեսական գործօնները, արդարև, ծանրակշիռ դեր են կատարել մարդկութեան էւոլիւցիայի մէջ և շատ յաճախ—վճռական դեր։

Բայց Մարքսը ևս չ'ասաց բովանդակ ճշմարտութիւնը և այսօր, կարող ենք ասել, հասարակական գիտութիւնը չունի տակաւին իր Նիւտօնը կամ Դարվինը, չունի մի թէօրիա, որ բացատրէր մէկ պատճառով ամբողջ մարդկային-հասարակական զարգացումը, որ վերածէր մէկ միայնակ ազդակի՝ ամբողջ հասարակական բազմադարեայ էւոլիւցիան, սկսած իր առաջին, նախապատմական աստիճաններից մինչև այսօրւայ քաղաքակրթութեան շրջանը։ Այդ „մոնիզմը“ չը կայ տակաւին... Նա գուցէ երբեք չը պիտի էլ գայ, քանի որ մենք գործ ունինք ոչ թէ իներտ, անասնական բնութեան հետ, այլ մարդկային հասարակութեան բարդ ու կնճռոտ մեխանիզմի, այլ մտածող ու գիտակցող, զգացող և կամեցող մի մարմնի հետ, յաւերժօրէն ձգտող, որոնող, յաւերժօրէն շարժւող ու կերպարանափոխւող։

Կը գա՞յ արդեօք հասարակագիտական կամ պատմագիտական Դարվինը... Զը գիտենք։ Յամենայն դէպս, մենք առ այժմ չենք կարող համաձայնուել մարքսեան ուղղափառ դպրոցի աշակերտների հետ, երբ նրանք յաւակնում են յայտարարել, թէ գտնուած է ամբողջական, մենիստական բանալին, մարդկութեան տիեզերական էւոլիւցիայի գաղտնիքները բանալու համար։

Մարքս գտել է, աւելի ճիշտ, ձեւակերպել է այդ բանալիներից մէկը, բայց ոչ միակը...

Դասակարգային կռուի փաստը չի տարածւում մարդկութեան ամբողջ էւոլիւցիայի վրայ։ „Տնտեսական մատերիալիզմը" կիրառւում է այն՝ միայն գրաւոր պատմութեան շրջանակներում։ Իսկ անդին կայ, ինչպէս տեսանք, նախապատմական խաւար, անեզր ու առեղծուածային շրջանը, ուր տնտեսականի հետ միասին թագաւորել են ըստ երևոյթին և ուրիշ կարգի օրէնքներն ու ազդակները—բնական ու ցեղագրական ազդակները, օրինակ (ազգաբնակութեան աճում ու շարժումներ, պատերազմներ և այլն), որոնք կատարւում էին զուտ սպենսերեան կամ աւելի ճիշտ դարվինեան „գոյամարտի" բռնաւոր նշանակի տակ։

Անդին, նախապատմական շրջաններում՝ ժողովուրդների էւոլիւցիան հնազանդւում է ուրիշ կարգի հրամայականի։ Այդպէս են մասամբ խոստովանում և մարքսիստական դպրոցի ոչ-մենիստ ուղղները, այդպէս է յայտարարում նոյնիսկ դպրոցի ստեղծողներից մինը—Ֆր. Էնգելս, որ իր յայտնի աշխատութեան մէջ (*Ursprung der Familie*...) լրացնում է տնտեսական մատերիալիզմը զուտ բնական, ֆիզիոլոգիական մատերիալիզմով։

Բայց անգամ „մինչայսօրեայ" գրաւոր պատմութեան սահմաններում՝ դասակարգային կռուի փաստը չի հանդիսանում, որպէս տիրական, միահեծան։ Դասակարգային բաղխումները չեն լցնում այդ ամբողջ պատմութիւնը։ Կան այդտեղ և ուրիշ տեսակ կռիւներ—բասային-ազգայնական կռիւները, օրինակ—որոնք միշտ և անպայման չեն վերածւում տնտեսական յարաբերութիւններին, պայմաններին։

Այն խօլական դաւադրութիւններն ու արիւնահեղ պայքարները, որ 19-րդ դարում և ուրիշ ժամանակ փոթորկել են ժամանակ ու ստրուկ ազգերի կեանքը, այն խանդավառ և բարձրաթռիչ հայրենասիրութիւնը, որ Գարիբալդիների ու Մաձինիների ձեռքով զանազան ժամանակներում բռնկւել է հրաբխի պէս այլ և այլ ազգերի ծոցում և ապշեցրել մարդկութիւնը, իդէալի, անձնուրացութեան թափերով... Այդ բոլորը խիստ դժւար է, անհնարին է վերածել „ժամանակի" նիւթական, տնտեսական պատճառներին, արդիւնաբերութեան ու փոխանակութեան վիճակին, դասակարգերի յարաբերութեան ու հակամարտութեան։

Այն վիթխարի և կոյր ուժը, որ „կրօնական մոլեռանդութիւն" անունն է կրում, որ մղում էր առաջին քրիստոնեաներին դէպի կամաւոր ու աղեխարշ նահատակութիւն, դէպի կրակ, գլադիատորական նախճիրներ, դէպի առիւծի ու վագրի ճիրանները, այն ուժը, որ նաև միջնադարեան աշխարհի մէջ մի ակնթարթում շարժել է, էլեկտրականացրել հսկայական զանգուածներ և մղել է դէպի նուաճում, աշխարհակալութիւն — այդ զարհուրելի ուժն ևս՝ չէք կարող վերածել ժամանակի նիւթական, տնտեսական պայմաններին, բացատրել գոյութիւն ունեցող այս կամ այն դասակարգի շահերով ու ձգտումներով։

Հայրենասիրութիւն, հաւատ, կրօնական մոլեռանդութիւն—դրական և բացասական ուժեր ու գաղափարներ—տարածուած լինելով ոչ միայն մէկ առանձին դասակարգի, այլ ամբողջ համայնքի, ժողովրդի վրայ, կարող են բռնկւել և խոշոր ցնցումներ առաջացնել՝ նաև ա ն կ ա խ տնտեսական ազդակից ու դասակարգային ախորժակներից։ „Իդէօլոգիան", գաղափարաբանութիւնը, որ մարքսեան դպրոցը հռչակում է իբրև սոսկ արտացոլում, սպասաւոր տնտեսական գործօնների, կարող է յաճախ հզօրապէս հակազդել ամբողջ հասարակական կեանքի վրայ, կարող է դառնալ „սպասաւորից"—„հրամանատար"։

Նիւթական ախորժակները՝ բոլորը չեն։ կան այլ տենչանքներ ու խթաններ մարդկային բնութեան մէջ։ Այո, անտարակոյս. համաշխարհային պատմութիւնն ալէկոծող հսկայ բաղխումների մէջ — կրօնական ընդվզումների, խաչակրաց արշաւների, Ալեքսանդրեան, Անիբալեան, Կեսարեան, Բօնապարտեան աշխարհակալող պատերազմների մէջ — որոշ տեղ ունին դասակարգերի ու անհատների զուտ նիւթական, տնտեսական ախորժակները (վայելքի անյագ ծարաւ, հողերի ու հարստութեան հետապնդում, արտահանութեան ու շուկայի պահանջներ, գերիների, մարդկային աշխատաւոր ձեռքերի որոնում և այլն), սակայն, ո՞վ կարող է ուրանալ այդ վիթխարի հեղեղներում գոյութիւնը մի այլ խոշոր ազդակի, որ խորունկ մխւած է մարդկային հոգեբանութեան մէջ, որ մղում է մի Ալեքսանդր Մակեդոնացու, մի Աննիբալի, մի Կեսարի, մի Նապոլէոնի՝ դէպի փառքի ու դիւցազնութեան բարձրագոյն գագաթները և դէպի արեան ու աւերածի խօլական անդունդները...

Այդ ազդակը — դա տիրապետութեան տենչն է, *der Wille zur Macht*, ինչպէս շեշտակի որակել է Ֆրիդրիխ Նիչշէ։ Դարձեալ ուրոյն մի ուժ է դա մարդկային բնութեան մէջ, դարձեալ անկախ տնտեսական ազդակներից։

Տիրապետութեան տե՞նչ. փառքի, պատուի սէր ու ծարաւ... Տիրել՝ լոկ տիրելու համար։ Տիրել՝ լոկ հռչակուելու, մեծարուելու համար... Ի՞նչ ահարկու դեր են խաղացել զուտ մարդկային այդ բնազդները մանաւանդ վաղեմի ժամանակներում, պատմութեան արշալոյսին, երբ մարդկութիւնը ապրում էր դեռ բնական վիճակում, երբ հզօրները, մի բուռն կտրիճներ հեռերին առած, արշաւում էին անդադար դէպի բոլոր հօրիզոնները, նուաճում, կոտորում, գերեվարում...

*

Նիւթական, տնտեսական ուժերը չեն միայն, որ շարժում են պատմութիւնը, այլ և մարդկային գիտակից կամեցողութիւնը, այլ և գաղափարական, իդէօլոգիական ազդակները, որոնք մ ի շ տ ու ա ն պ ա յ մ ա ն չ է ն վ ե ր ա ծ ւ ո ւ մ „տնտեսականին"։ Զի վերածւում տնտեսական գործօնին մանաւանդ այսպէս կոչւած բարձր իդէօլոգիան—փիլիսոփայութիւն, մետաֆիզիկա, կրօնական դոգմայնութիւն, գեղարուեստ։ Այդ աշխարհում՝ ևս, անտարակոյս — մանաւանդ կրօնի ու արուեստի մէջ —

բազմաթիւ երևոյթներ դիւրաւ բացատրելի են նիւթական, արդիւնագործական պայմաններով, բայց ոչ բոլորը։ Աստուածաբանական, փիլիսոփայական դարաւոր սպեկուլացիաները, միաստուածութեան, բազմաստուածութեան ու այլ կրօնական սիստեմների ու դոգմերի գոյացումը, փիլիսոփայական մեծ, համաշխարհային ուղղութիւնների ծնունդը—մատերիալիզմի ու իդեալիզմի, դոգմատիզմի ու սկեպտիցիզմի, բացիոնալիզմի ու էմպիրիզմի — չի կարելի դարձեալ վերածել „ժամանակի“ տնտեսական խարիսխներին, չի կարելի հոչակել, իբրև նրանց վերնաշէնք, արդիւնք, արտացոլում. . . Քով քովի, հին, պանծալի Ցունաստանում կանգուն էին մատերիալիզմի և իդեալիզմի վարդապետութիւնները, ծնւում էին, բարգաւաճում միևնոյն հասարակական-տնտեսական պայմաններում և՛ Դեմոկրիտի և՛ Պլատոնի ուսմունքները, որոնք այնուհետև ընթացան զուգահեռաբար ամբողջ միջնադարեան աշխարհի արկածների, արհաւիրքների վրայից, նման պայմաններում և նման մթնոլորտում առաջադիմեցին, զարգացան, առանց իրար վնասելու, յաղթահարելու և նման տնտեսական պայմաններում երկուսն էլ թևակոխեցին 19-րդ դարը, ուր մէկը փթթեց և հասաւ գագաթնակէտին հեգելեան հոյակառոյց սիստեմի մէջ, միւսը՝ Ֆոխտի, Բիւխների, Մոլեշոտի և մանաւանդ Հեկկելի սպինոզայաշունչ սիստեմի մէջ։

Անկարելի է, կոպտօրէն միակողմանի և աբսուրդ է՝ պատճառի և հետևանքի կապ հաստատել փիլիսոփայական այդ հոյակապ սիստեմների և արդիւնագործութեան ձևերի միջև, այսինքն դուրս բերել այդ սիստեմները, իբրև հետևանք տնտեսական արդիւնաբերութեան ձևերի։ Անկարելի է և գռեհկօրէն միակողմանի՝ դուրս բերել Կանտի քննական փիլիսոփայութեան հսկայ շէնքը, նրա բարոյական սիստեմը իր „կոտեգորիկ իմպերատիվներով“, իբրև արդիւնք գերմանական բուրժուազիայի կամ թէ ուրիշ մի դասակարգի շահերի, մտահոգութիւնների... Այդպէս սակայն փորձեցին անել սիմպլիստ, պարզունակ „ուղղափառները“, մանաւանդ ռուսների մէջ։ Դա նոյնքան կոպիտ է, որքան Ֆոխտի ու Կաբանիսի հռչակաւոր մատերիալիստական այլաբանութիւնը. „Միտքը բղխում է ուղեղից, ինչպէս մեզը երիկամունքներից“։

Ի՞նչ օրէնքներով է ղեկավարւում մարդկային ուղեղի այդ բարձրագոյն արտայայտութիւնը—փիլիսոփայական միտքը՝ իր դարաւոր ու արկածաւոր էվոլիւցիայի մէջ... Ոչ մի թէորիա դեռ չի պատասխանել շատ թէ քիչ բաւարար կերպով այդ հարցումին։ Մարքսիզմի „լուծումը“ մի պարզ ու արգահատելի քաշքշուկ է, կարելի է ասել, և գեղարուեստի վերաբերմամբ։ Եթէ անգամ աչողեն կրօնի, գեղարուեստի, բարոյագիտութեան զարգացումը վերածել տնտեսական, դասակարգային պատճառների—փիլիսոփայական մտքի զարգացումը պահպանելու է միշտ իր ինքնօրինութիւնը՝ աւտօնոմիան...

***

Գաղափարները, „իդեոլոգիան“... չեն, ուրեմն, իբրև սոսկ „արտացոլում“, „վերնաշէնք“, „սպասաւոր“ տնտեսական գործօնների և նրանք խաղում են իրենց դերը համաշխարհային պատմութեան մէջ։

Տնտեսական պատճառը, դասակարգային անհաւասարութիւնն ու հակամարտութիւնը մեծ, ահագին տեղ ունի, օրինակ, Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան ծագման պրոցէսում—քանի որ երկու առանձնաշնորհեալ դասակարգերը, կղեր և ազնուականութիւն, լինելով հանդերձ մի չնչին փոքրամասնութիւն, ընդամենը 300,000 հոգի, իրենց ձեռքն էին առել Ֆրանսիայի հողային հարստութեան գրեթէ կէսը—սակայն այդ նիւթական հակադրութիւնները չէին միայն, որ առաջ բերին 18-րդ դարի համաշխարհային մեծագոյն վերիվայրումը։

Կարելի է գտնել նոյն նիւթական, դասակարգային շահերի խաղը նաև Լութերի ու Հուսի բորբոքած շարժումների, և այլ խոշոր տնցքերի ծագման պրոցէսում, կարելի է գտնել տնտեսական պատճառը բոլոր պատմական վերիվայրումների մէջ. չէ՞ մարդը ևս կենդանի է, որին ամենից առաջ պէտք է ապրել, յարատևել, պէտք է սնուել, աճել, զարգանալ և ապա միայն „փիլիսոփայել“։ *Primum vivere deinde philosopharis...* Բայց եթէ Թիւրքիան, Պարսկաստանը, նրանցից առաջ ուրիշ յետամնաց երկիրներ, սպասէին — իրենց քաղաքական յեղափոխութիւնը կատարելու համար—մինչև որ պարզուէր „դասակարգային հակամարտութեան“ դրօշը, մինչև որ ծնուէր արդիւնաբերող բուրժուազիան՝ կղերի ու բիւրօկրատիայի ամենազօր պատնէշները խորտակելու համար... պէտք էր չափազ՞անց երկար սպասէին։

Կան, բարեբախտաբար, ուրիշ ուժեր, որ գալիս են փոթորկելու արևելեան անշարժութեան ճահիճը, որ գալիս են ստեղծելու նոր կարիքներ ու պահանջներ, աւելի ճիշտ, գրգռելու, հրահրելու այդ կարիքները — ազատութեան, արդարութեան, մարդավայել կացութեան — որոնք արդէն բնազդային ու մրափուն վիճակում գոյութիւն ունին այդ յետամնաց ժողովուրդների խոպան ու տանջահար գիտակցութեան մէջ և որոնց արժէքը նրանք գիտեն գնահատել միայն յետոյ, այդ թանկագին նուաճումները ճաշակելիս...

Կան, այո, ուրիշ կարգի խթաններ, ազդակներ. կայ ինքը մարդ-անհատը, նրա գիտակցութիւնն ու կամքը, որ առանձնապէս ցոլում է մեծ մարդկանց ու գործիչների և խիզախ ու անվեհեր փոքրամասնութիւնների մէջ։ Կայ Գաղափար-Ուժը, սուբ՝եկտիվ, ենթակայական ազդակը, որ չափազանց նսեմացուում է „տնտեսական մատերիալիզմի“ մոլեռանդ դաւանողների կողմից, որ սակայն, ունի իր պատկառելի դերը հասարակական-քաղաքական ու այլ տեսակ շարժումների, վերիվայրումների մէջ։ Ձենք մտնի պարապ հարցի քննութեան մէջ, թէ ո՞րն է գերակշռողը երկու մեծ ազդակներից և ո՞րն է առաջնագոյնը — նիւթակա՞նը, թէ գաղափարականը... Գիտենք միայն, որ անյիշատակ դարերից ի վեր հասարակական էվոլիւցիայի հոսանքում՝ երկուսը գործակցել են յարաժամ, փոխադարձաբար ազդել, հակազդել, կերպարանաւորել, ստեղծել... Գաղափարական, իդէական կամ իդէոլոգիական գործօնը ինքը մարդն է, գերազանցապէս բարդ ու հարուստ մի էակ, օժտուած կամքով, նեարդերով ու կրքերով, բանականութեամբ, գիտակցութեամբ։ Իբրև այդպիսին, նա ինքն է ստեղծում իր պատմութիւնը. . . Յաճախ, անշո՞ւշտ, շատ յաճախ նա ստանում է մղումները ար-

տաքին միջավայրից, նիւթական ազդակներից, բայց նա ունի հսկայական ու հրաշագործ կարողութիւն հակազդելու այդ արտաքին միջավայրի, այդ նիւթական ազդակների դէմ, նա ունի, որ գլխաւորն է — կրկնենք դարձեալ մեր հիմնական միտքը — նա ունի ընդունակութիւն՝ բարձրանալու իր վրայ ազդող միջավայրից, գերազանցելու զինքը ծնող հասարակութեան և գնահատելու հասարակական էւոլիւցիայի բովանդակ ուղղութիւնը՝ իր չափերի, նպատակների ու սկզբունքների տեսակէտից։

Եւ համաձայն այդ գնահատութեան արդիւնքի՝ մարդու, կամքոտ ու գիտակից էակի նպատակաւոր գործունէութիւնը կարող է ընդունել այս կամ այն ձևն ու ուղղութիւնը, կարող է իր հերթին ազդել հզօրապէս շրջապատող միջավայրի վրայ և ուղղել մտքերը դէպի այս կամ այն հորիզոնը։ Այդպէս են վարել հռչակաւոր „պատմական փոքրամասնութիւններն“ ու մեծ, կորովի, բացառիկ անհատները, որ այլ և այլ ժամանակ կոչուած են եղել գործելու — որոշ, ազատարար նպատակի ուղղութեամբ — վերին աստիճանի աննպաստ մեռած, դիակնացած միջավայրում... Նրանք կամ ընկճել ու խորտակուել են իրենցից աւելի ուժեղ միջավայրի հարուածների տակ, կամ թէ անդուլ ու յուսահատ մաքառումով վերջ ի վերջոյ յաղթանակել են, իրենց պողպատեայ կամքերի ու բազուկների հակահարուածներով ճեղքել են միջավայրի դժնդակ սառուցը և կեանք են սերմանել մահաբոյր մթնոլորտում։

Գնահատել երևոյթները, գնահատել հասարակական էւոլիւցիայի ուղղութիւնը, ծափահարել կամ դատապարտել, հալածել կամ քաջալերել, փութացնել իրերի ընթացքը դէպի բաղձալի նպատակակէտը — այդ բոլորը տրուած է — նաև անկախ անտեսական, օբ՝եկտիվ էւոլիւցիայի հրամայականներից — իւրաքանչիւր գիտակից, քննադատօրէն խորհող ու գործող անհատի, որը մարքսեան արտայայտութեամբ իսկ, ազատագրւում է հետզհետէ „անհրաժեշտութեան“, ճակատագրականութեան թագաւորութիւնից, բարձրանում է, իբրև արդէն ազատ մարդ, իր տափակ միջավայրից, ընդգրկում է կեանքի բովանդակ ամբողջութիւնը, ըմբռնում է նրա ընթացքը...

Եթէ մարդկութեան մի պատկառելի մասը նորագոյն ժամանակներում է միայն ազատագրւում այդ „անհրաժեշտութեան“ աշխարհից, եթէ — սոցիոլոգիայի, հասարակագիտութեան ծնունդի շնորհիւ, այսօր ենք միայն սկսել թօթափել հասարակական ուժերի բռնաւոր տիրապետութիւնը, մերկացնելով նրանց ընթացքն ու օրէնքները և ազդելով փոխադարձաբար նրանց վրայ — այդ դեռ, հարկաւ, չի նշանակում, թէ նախկին ժամանակներում, „անգիտակցութեան“ շրջաններում բացակայել են նման „ազատագրուած“ անհատները... Նրանք միշտ էլ եղել են — դէթ պատմութեան հորիզոններում — իբրև ազդարար, նախապատրաստող գալոց մարդկութեան և միշտ էլ թողել են իրենց անհատական դրոշմը անցքերի վրայ, այլ և այլ երկրներում կամ թէ ամբողջ համաշխարհային պատմութեան մէջ։

Ահագին է մարդ-անհատի ու գաղափարական գործօնների ուժն ու ազդեցութիւնը պատմական պրոցէսի մէջ։ Ահագին է այդ ազդեցութիւնը նաև Ֆրանսիական Յեղափոխութեան նախօրեակին։ Միմիայն անտեսական խթանները չէին թատերավայրում, միմիայն իրաւազուրկ բուրժուազիայի դասակարգային ախորժակները չէին, որ բռնկեցրին շղթայազերծ Մրրիկը, այլ և 18-րդ դարի վեհապանծ իդէօլոգիան, — գերազանցապէս մարդկայնական, ազատաշունչ — այլ և բանապաշտ, բացիոնալիստ փիլիսոփայութիւնը, էնցիկլոպեդիստները, Մոնտեսկիոները, Ռուսսոներն ու Վոլտերները։ Անշո՛ւշտ, դարձեալ, նրանք ևս ծնունդ էին իրենց միջավայրի։ Անշո՛ւշտ, նրանք հանդէպ էին գնում նոր բարձրացող դասակարգին, թարգմանում էին նրա իղձերն ու տենչանքները։ Բայց և, անշո՛ւշտ, առանց այդ Ռուսսոների ու Վոլտերների, առանց այդ հսկայ, անօրինակ „մտաւորականութեան“ քարոզների, առանց նրանց մշակած պրոբլեմների, իդէալների՝ նոր, փողային դասակարգը չէր անի ինքնաբերաբար այն ահարկու թռիչքները, չէր ձևակերպի այն ընդարձակ, արմատական, սոցիալական ռէֆորմները, չէր յօրինի, մանաւանդ, համաշխարհային, համամարդկային այն լոզունգները, նշանաբաններ, որոնցով անմահացաւ Ֆրանսիական Յեղափոխութիւնը և որոնցով նա հասա՛. տիտանեան, անհասանելի բարձունքների։ Չէր արձակի այդպիսի մեծ, համամարդկային նշանաբաններ — ո՞ւր առաւել — և պրոլետարիատը, իրաւազուրկ ու գոյքազուրկ չորրորդ դասակարգը, որ Մեծ Յեղափոխութեան օրերում մի խաւար, անկերպարան զանգուած էր, որ շարժւում էր բնազդօրէն, զուրկ դասակարգային գիտակցութիւնից և մտքի այն լայն հորիզոններից, որոնք այսօրեան գիտակից պրոլետարիատի սեփականութիւնն են։

Ոչ. ոչ երրորդ և ոչ չորրորդ դասակարգը չէին կարող ինքնաբերաբար այնպիսի վիթխարի նպատակներ առաջադրել և յանուն նրանց՝ նիւթել այնպիսի վերիվայրումներ։ Այդ անողները՝ „իդէօլոգներն“ էին, մտքի ընտիր ներկայացուցիչները։ Իբրև հզօր իմացականութիւններ, զինուած արտակարգ հոտառութեամբ, նրանք ըմբռնեցին ժամանակի ոգին, հասկացան ժողովրդային ընդհանրութեան աղօտ, տարտամ տենչանքները, բայց և հուժկու մի թռիչքով գերազանցեցին նրանց, անհամեմատ լայնացրին, ընդարձակեցին բուրժուազական բաղձանքների աւետարանը և իրենց հանճարեղ ու բացաշունչ գրիչներով փողահարեցին դէպի աշխարհի չորս բոլորը։..

Որքա՞ն զօրաւոր է այդ գրիչների դերը՝ հէնց փոթորիկը նախապատրաստելու և շղթայազերծելու գործի մէջ... Ի՞նչ ահարկու շանթեր, խարազանումներ էն ցիկլոպեդիստների, հանրագէաների կողմից։ Մինչդեռ Մոնտեսկիօն, „Օրէնքների ոգի“-ի հանճարեղ հեղինակը, գիտնականի պաղ, անխռով հանդարտութեամբ արծարծում էր անգլիական սահմանադրութեան գաղափարները և շեշտում նրանց կիրառման անհրաժեշտութիւնը իր հայրենիքում, մինչդեռ Վոլտերը, նոյնպէս չափաւոր իր քաղաքական համոզումների մէջ, բայց անողոք տիրող կարգերի վերաբերմամբ, իր թունաւոր հեգնութեամբ, իր լափող, աննման երգիծական գրուածքներով, նշաւակում էր իշխանութեան զեղծումները, առանձնաշնորհեալ կաստաների — կղերի, ազնուականութեան — խորարմատ մոլութիւնները, մինչդեռ նա իր ահեղ ոճով մտրակում էր հոգիների ու մտքերի վրայ ծանրացած նախապաշարումների հսկայ

լեռը,—Ժան-Ժակ Ռուսսօն, Ցեղափոխութեան փոթորկաշունչ մարգարէն, քարոզում էր աւեր ու փլատակ դարձնել գոյութիւն ունեցող ամբողջ պետական կառուցուածքը, *tabula rasa*-ի—մերկ տախտակի — վերածել այն և հիմնարկել հասարակապետութիւն, res-publica։

Եւ Ժան-Ժակի ձայնն էր, որ ամենից հուժկու որոտաց յեղափոխական Ֆրանսիայի ականջներին, նրա ոգին էր, որ մի քանի տարի շարունակ սաւառնում էր խնջական թափօրների արիւնաղերկ կրկէսի վրայ, բացավառում էր թէ տալիս դաժանադէմ Ժակօբիններին, Ռօբեսպիէռներին ու Դանտոններին, նախագահում էր և նորաստեղծ հանրապետութեան արմատական որոշումներին, սօցիալական ընդարձակ ռէֆօրմների ծրագիրներին և այլն։

***

Մի առանձին մոլեռանդութեամբ փայլում են մարքսիստները Ռուսաստանում և յատկապէս մեր կովկասեան միջավայրում, ուր նրանք սիրում են առհասարակ բառացի կիրառել „տնտեսական մատերիալիզմի“ դոգմը։ Այդտեղ մարքսիստական հռչակաւոր „մոնիզմը“ հասնում է ծայրայեղ „սիմպլիզմի“ (պարզացման)։ Տնտեսական պատճառը միահեծանօրէն ու տիրականօրէն „բացատրում է“ բոլոր կնճիռները, ազգայնական հոսանքներ, ցեղային-կրօնական բաղխումներ և այլն։ Սիմպլիստ, պարզունակ մտքերը սովոր են առհասարակ դիւրին մեկնաբանութիւն տալ հասարակական ամենաբարդ երևոյթներին. „ֆորմուլի“ մի հուժկու ներշնչումով, գրչի մի մոլեգին հարուածով նրանք կը լուծեն մի ակնթարթում կեանքի բոլոր չարաբաստիկ ու արիւնոտ հանգոյցները... Մենք այդ տեսանք, գիտեցինք ծանր սրտով, վերջին տագնապալի թուականներում։

Հասարակական գիտութիւնը փոքր ինչ աւելի խստապահանջ է երևոյթների մեկնաբանութեան նկատմամբ։ Պատճառները հասարակական էւոլիւցիայի մէջ սովորաբար բարդ են լինում, խճողուած։ Մի իրողութիւն, մի երևոյթ, մի „հետևանք“ սովորաբար մէկ պատճառ չէ ունենում, այլ պատճառների ու պայմանների մի շարան, մի ահագին, բազմակնճիռ հիւսուածք։ Չէ կարելի բաւականանալ մէկ պատճառով, ինչպէս անում է պրօֆան, ռամկական մտածողութիւնը։ Պէտք է ձգտել ընդգրկելու պատճառների ամբողջութիւնը, իր տարածութեամբ ու խորութեամբ, երբ, օրինակ, կամենում էք պատասխանել այն հարցին՝ թէ ինչո՞ւ հայ ժողովուրդը իր աշխարհագրական սահմանների մէջ բնակութիւն է հաստատած գլխաւորապէս բարձր, լեռնային վայրերում, ուր „տնտեսական պայմանները“ ընդհանրապէս այնքան քիչ հրապոյր են ներկայացնում։ Մարքսիզմը բաւական չէ այդտեղ իր տնտեսական մատերիալիզմով. — պէտք է դիմել դարվինիզմին։ Դարվինիզմն էլ գուցէ մեն-մենակ բաւական չը լինի, հարկ է թերևս օգնութեան կոչել ուրիշ հիպոթեզներ ու մեկնութիւններ։

Զարաչար վրիպում են „տնտեսական մատերիալիզմի“ բացատրութիւնները մեր կեանքի վերջին շրջանի խոշոր երևոյթների վերաբերմամբ.—հայկական շարժում, թիւրքահայոց աղէտներ, թուրք-հայկական ընդհարում, օսմանեան և պարսկական յեղափոխութիւններ։ Երբ կը փորձենք լուսաբանել հայոց շարժումն ու կոտորածները, թաթարական գրոհը, թիւրք ու պարսիկ յեղափոխութիւնները դասակարգային շահերի բաղխումներով և նրանց „իդէօլոգիական“ անդրադարձումներով—չափազանց թեթևօրէն կը մեղանչենք պատմական ճշմարտութեան դէմ։ Կապիտալիզմը և ֆէօդալիզմը իրենց փոխադարձ յարաբերութեամբ ու հակադրութեամբ՝ ունին գուցէ իրենց հեռաւոր առնչութիւնը երկու արևելեան երկրների վերածնութեան փորձերի հետ. բայց այդ կապիտալիզմի ու ֆէօդալիզմի ընդհանուր պատկերը և փոխադարձ յարաբերութիւնը սրանից տասնեակ տարիներ առաջ շատ էլ տարբեր չէր այժմեանից, ինչպէս որ տարբեր չէր և բռնակալութեան ճնշման թափը, և—սակայն վերածնութեան շարժումները չը կատարուեցին տասնեակ տարիներ առաջ, այլ կատարուում են այսօր։ Տարդի օրէնքը — արևմտեան գաղափարների ընդօրինակումն ու փոխադրումը մի բուռն սպաների ուղեղներով և Ռեվելի պատմական տեսակցութիւնը—աւելի ուժ ու կշիռ ունեցաւ օսմանեան վերիվայրումի մէջ, քան բոլոր դասակարգային „անտագոնիզմներն“ ու „արդիւնաբերական յարաբերութիւնները“։

Տնտեսական պատճառը, ընդհանուր առմամբ, անտարակոյս, կայ նաև թիւրք ու պարսիկ նորագոյն յեղաշրջումների մէջ։ Ո՞րտեղ չը կայ նիւթական բարեկեցութեան պահանջը։ Սակայն, դրանով բացատրել այդ յեղաշրջումները, միևնոյն է թէ ոչինչ չը բացատրել։ Այդ ընդհանուր պատճառը—բարեկեցութեան, բարօրութեան պահանջը—գոյութիւն է ունեցել նոյն երկրներում դարերից ի վեր, բայց չի յարուցել որևէ յեղաշրջում։ Յարուցանելու համար անհրաժեշտ էր, որ այդ յարակայ (*immanent*), մշտնջենաւոր պատճառին աւելանային մի շարք ուրիշ պատճառներ ու պայմաններ։ Անհրաժեշտ էր, օրինակ, որ երևան գար գիտակից, մտաւորական տարրը մահմեդական հօրիզոններում, որպէս զի խթանէր, հրահրէր ու բորբոքէր ժողովրդի մէջ վերը յիշած մշտնջենաւոր պահանջը, որ գոյութիւն ունէր այդ ժողովրդի ծոցում քնած, մրափուն, կրաւորական վիճակի մէջ։ Շատ յաճախ պահանջը — աւելի բարձր հասարակակենցաղի ու բարօրութեան պահանջը—բնաւ չի էլ նշմարուում դարաւոր ստրկութեան մէջ մարզուած զանգուածներում. գիտակից ու քննադատող միտքն է, որ գալիս է գրգռելու, արթնացնելու այն՝ և մղելու դէպի հերոսական գործեր...

Այդտեղ է ահա անհատի, գաղափարի, իդէօլոգիայի դերը, որ չնչելու չափ նսեմացուում է մարքսիստական ուղղափառների կողմից։

***

Այդտեղ է և տարբերութիւնը մարդկութեան ու անասնութեան։

Ամփոփենք։ Մարդ-անհատը նրանով է հէնց տարբերուում իր զօոլօգիական միջավայրից, որ նա ինքն իրեն գիտակցաբար առաջադրում է նպատակներ ու իդէալներ և ձգտում է իրականացնել։ Թո՛ղ նրանք

երբէք չ'իրականանան լիովին, բացարձակապէս. այդ միևնոյն է. նպատակադրութեան ու ձգտման փաստը ինքնին արդէն վկայում է, որ մարդ-էակը ունի գործելու յարաբերական ազատութիւն, որ նա չի մատնուած սարկօրէն տիեզերական դէտերմինիզմին (պատճառաւորականութեան)։ Ուսումնասիրելով հասարակական կեանքի երևոյթները, իբրև սոցիոլոգ, հասարակաբան, նա ձըգտում է գտնել, սահմանել հասարակութիւնների կենաց ու զարգացման օրէնքները, բայց այդ բաւական չէ. նա ունի որոշ իդէալ և ձգտում է փոփոխել հասարակական յարաբերութիւնները համաձայն այդ իդէալի, ձըգտում է ուղղել զարգացման անիւը դէպի իր առաջադրած նպատակները։

Թո՞ղ այդ յաւիտենական ձգտման ճանապարհին նա հանդիպէ ամեն քայլափոխում արհաւրալի խոչընդոտների։ Թո՞ղ իրականութիւնը (օբ'եկտիվ գործօնը) լինի քար ու ապառաժ՝ նրա սերմանած գաղափարների համար... Փո՞յթ չէ. նա պէտք է միշտ ըմբոստանայ իրականութեան տարկանոնութիւնների, չարիքների դէմ, պէտք է ջանայ ոչ թէ յարմարուիլ այդ չար ու անարգ իրականութեան—ինչպէս որ քարոզում է Սպենսերների տարերայնապաշտ օբ'եկտիվիզմը — այլ յարմարեցնել այդ իրականութիւնը իր սեփական ցանկութիւններին, իդէալներին, իր „վճռական իմպերատիվներին“, իր մաքի, կամքի ու խղճի հրամայականներին։ Այդպէս են վարուել դարերից ի վեր իդէալական ու պատմական փոքրամասնութիւնները։ Ի՞նչ կը լինէր, եթէ իսկզբանէ մարդկութեան բոլոր գաղափարական զաւակները—բոլոր այդ Ցիսուսները, Գրակխուսները, Դանտոնները ու Մաձինիները—ի՞նչ կը լինէր արդեօք, եթէ նրանք մատծէին ընդհանրութեան պէս յարմարուել իրենց շրջապատող գորշ ու տափակ միջավայրին և ձեռնածալ ենթարկուել տարերային հոսանքներին... տրամաբանելով ժամանակակից մարքսիստների պէս, թէ հասարակական զարգացման ընթացքը ինքնին արդէն համապատասխանում է մեր արդարութեան իդէալի պահանջներին, թէ պատմութեան անիւը ինքնին որդէն ճակատագրօրէն, տարերայնօրէն մղում է դէպի Ազատութիւն, Հաւասարութիւն, Եղբայրութիւն...

Այդպէս է պատճառաբանում ուղղափառ մարքսիզմը։ Սոցիալիզմը պէտք է գայ, Հաւասարութեան իդէալը պէտք է յաղթանակէ՝ անկախ մարդկանց ցանկութիւններից ու իդէալներից, սոսկ իրերի տարերային մղումով։ Տնտեսական յարաբերութիւնների զարգացումը տանում է արդէն անդիմադրելի սլացքով և դիալեքտիկական հակադրութիւններով դէպի „ժխտման ժըխտումը“... Կապիտալի յարաճուն կենտրոնացման թևերի վրայ սլանում է հեգելեան եռաստիճան ֆորմուլը և պիտի գայ ճակատագրօրէն մի օր, երբ մասնաւոր սեփականութիւնը համայնաւեր մի „կատաստրոֆի“ մէջ պիտի տեղի տայ իր հակոտնեային, իր անտիթեզին — համայնական սեփականութեանը։ Միանգամայն համաձայն է դա եռաստիճան ֆորմուլին, որ մարքսիստները փոխառել են Հեգելից։ Արդարև. հնում կար արդէն համայնական սեփականութիւն՝ հողերի ու այլ գոյքերի. բայց դա գռեհիկ նահապետական կոմունիզմն էր, որ չէր կարող յաւերժանալ։ Վրայ հասաւ անտիթեզը, քայքայուեցին հին նահապետական կարգերը և հիմնուեց նորը՝ մասնաւոր կապիտալիստական սեփականութեան վրայ, որ իշխում է մինչև օրս էլ։ Սակայն այս վերջինն ևս չի կարող յաւերժանալ, նրա արգանդի մէջ գործում են արդէն նոր, շինարար ուժեր, որ ի վերջոյ պիտի տապալեն ամբողջ կապիտալիստական հասարակակարգը և նրանց աւերակների վրայ պիտի հիմնարկի „գերագոյն սինթեզը“—կոմունիստական կամ համայնատիրական ռէժիմը։ Դա այլ ևս նախնական կոմունիզմը չի լինի, այլ մի նոր, բարձր համայնակենցաղ, հարստացած դաբաւոր քաղաքակրթութեան գանձերով...

Թեզ, անտիթեզ, սինթեզ... Սիրուն է դիալեքտիկայի խաղը. կիրառումն էլ թաւում է տեղին, պատշաճ ու բանաւոր։ Միայն թէ... ակամայ հարց էք տալիս. ի՞նչ պիտի լինի արդեօք յաջորդ „ժխտումը“... Չէ՞ „սինթեզը“ ևս չի կարող յարատև լինել, ապագայ կոմունիզմն ևս պիտի կործանուի վաղ թէ ուշ և պիտի ծնունդ տայ տրամաբանօրէն իր անտիթեզին, հակադրութեան։ Ի՞նչ պիտի լինի արդեօք այդ նոր հակադրութիւնը... Նորէն գուցէ կապիտալիզմ ու մասնաւոր սեփականութիւն։ (կամ վերջինների մի այլաձևո՞ւմ)։ Նորէն գուցէ դասակարգեր և նորէն առանձնաշնորհումներ...

Ամեն բան հնարաւոր է այդ քմահաճ ու արտառոց դիալեքտիկայի առջև, որի համար „այո՝ն դառնում է ոչ, ոչ-ը՝ այո“ և որի հրահանգով Պրուսսիան յայտնւում էր հասարակական էւոլիւցիայի սինթեզ, Ազատութեան մարմնացում, կատարելատիպ...

Մենք չենք ասում, թէ կոմունիզմը և տիեզերական հաւասարութիւնը պիտի գան իրենք իրենց, լոկ տնտեսական ուժերի խաղով, կապիտալի կենտրօնացումով, թեզի ու անտիթեզի յաւիտենական ու մեքենական մարտանքներով։ Մենք դաւանում ենք այն հմտզու�ը, որ մարդկային հասարակութիւնները չեն մատնուած կոյր, տարերային ազդակներին, լոկ իրերի ճակատագրական առաջխաղացութեան, այլ որ նրանց ճակատագիրը տնօրինելու գործի մէջ ծանրակշիռ դեր ունին իրենք մարդիկ, որպէս ուրոյն, ներգործական ազդակներ։ Մենք դաւանում ենք այն տեսակէտը՝ որ Հաւասարութեան ու Արդարութեան մեր Իդէալն ևս բղխում է ոչ միայն իրերի օբ'եկտիվ, առարկայական ընթացքից (տնտեսական զարգացումից և այլն), այլ և մեր բարոյական գիտակցութիւնից. կոմունիզմի կամ սոցիալիզմի այդ իդէալը—որի իրականացմամբ միայն անհատը պիտի ստանայ հնարաւորութիւն՝ բազմակողմանիօրէն ու ներդաշնակօրէն զարգացնելու իր մարդկային էութիւնը, իր բոլոր օրգաններն ու ընդունակութիւնները—պիտի գայ, մի օր անշուշտ պիտի յաղթանակէ, ոչ թէ միայն այն պատճառով, որ այդպէս է հրահանգում տնտեսական էւոլիւցիան կամ օբ'եկտիվ, առարկայական զարգացումը, ոչ թէ միայն այն պատճառով, որ ներկայ արտաւոր, ոճրանիւթ կարգերը արտադրում են արդէն դժգոհների լեգէոններ, որ կապիտալիզմը ծնունդ է տալիս իր գերեզմանափոր-պրոլետարիատին, որ արդիւնագործութիւնը միշտ աւելի և աւելի de facto համայնանում է, կենտրոնանում հսկայական, համախմբուած պրոլետարական զանգուածների ձեռքերում — այլ սոցիալիզմի իդէալը պէտք է անպայման ու վաղ թէ ուշ իրականանայ և

այն պատճառով՝ որ այդպէս է թելադրում մեր մարդկային գիտակցութիւնը, այդպէս է հրամայում մեր խիղճն ու բանականութիւնը, որոնք չեն կարող տեւական օրէն հաշտուել անհաւասարութեան ու անարդարութեան մի չարագործ ռէժիմի հետ, ուր անհատը զոհաբերւում է հասարակութեան ու պետութեան, ուր միլիոնաւոր սեփականազուրկ և իրաւազուրկ լէգիոնները հեծում են ֆիզիքական, բարոյական ու մտաւոր թշուառութեան անդունդներում։ Մեր խիղճը ըմբոստանում է հասարակական ծովացած անիրաւութիւնների հանդէպ և մենք, շարունակելով մեր գաղափարական նախնիքների գործը, որոնք ամենահին ժամանակներից ի վեր, մահուան ու տանջանքների գնով, ծառացել են շարունակ ամեն տեսակ բռնութիւնների, բնածին ու մարդկայնածին ամեն տեսակ չարիքների դէմ—մենք մխւում ենք մեր կամքի ու մտքի բոլոր ուժով պատմական, առարկայական պրոցէսի մէջ, մենք դնում ենք որոշ իդէալ, նպատակ, մենք մղում ենք դէպի ներանց՝ Զարգացման անիւը, մենք կրթում ենք, դաստիարակում ու կազմակերպում զանգուածները մեր դաւանած իդէալների ուղղութեամբ, պատրաստում ենք, մի խօսքով, գալոց ազատ մարդկութիւնը։

Գիտակից, խորհող ու քննադատող մարդկանց թիւը միշտ աւելի աճում է քաղաքակրթութեան ընթացքի հետ և սոցիոլոգիան, հասարակական գիտութիւնը առաջադիմելով, միշտ աւելի աճում է նաև հնարաւորութիւնը՝ թափանցելու հասարակական զարգացման օրէնքների մէջ, բաց անելու մարդկութեան էւոլիւցիայի գաղտնիքները և դրանով իսկ տիրելու վերջիններին։ Ինչպէս որ բնութեան օրէնքներն ուսումնասիրելով՝ վաղուց ի վեր սովորել ենք ենթարկել մեզ կոյր ու ըմբոստ տարերքների մի մասը—իսկ այսօր սկսում ենք տիրապետել և օդերին ու հողմերին—նոյնպէս և հասարակական զարգացման օրէնքները ճանաչելով, պիտի սովորենք թափել հեռզհետէ „ճակատագրականութեան“ լուծը, հնազանդեցնել մեր կամքին այդ Զարգացման անիւը, պիտի սովորենք, մի խօսքով, ղեկավարել տիրաբար մարդկութեան ճակատագիրը և առաջնորդել այն՝ դէպի մեր պաշտած ու երազած հանգրւանները, դէպի ճշմարիտ Ազատութիւն և ճշմարիտ Հաւասարութիւն։

Այդպիսով Իդէալը — եզրափակենք „Դաշնակցութեան“ Ծրագրի վերջաբանով—„բոլոր տանջուածների և հալածուածների այդ իդէալը չի հանդիսանում, իբրև անհող ու անխարիսխ մի ցնորք, այլ իբրև իրագործելի մի հնարաւորութիւն (*possibilité réalisable*), որովհետև նա բղխում է ոչ միայն իրերի առարկայական, տարերային ընթացքից, այլ և թելադրւում է հրամայաբար պատմութիւնն առաջ շարժող զանգուածների ու անհատների կամքից, խղճից ու բանականութիւնից։ Պատմութեան առարկայական ու ենթակայական ուժերի գործակցութեան մէջն է գրաւականը այն անտարակուսելի յաղթանակի, որ պիտի տանի աշխատաւոր մարդկութիւնը թէ բնութեան կոյր ուժերի և թէ հասարակութեան մէջ դարերով թագաւորող ստրկութեան ու անարդարութեան դէմ“։

ՄԵՀՄԵԴ-ԱԼԻԻ ԹՌԻՉՔԸ

Արիւնալի անակնկալներ են տեղի ունենում Պարսկաստանում։ Հեռագիրը ծանուցանում է վերջին պահուն, որ նախկին Շահը գաղտագողի մտել է երկիր, հաւաքել է իր շուրջը հաւատարիմ թիւրմեն ցեղերը եւ պատրաստւում է յեռ նւաանել բռնապետական իր թագը։

Անակնկալը մեծ իրարանցումն է յարուցանում դիւանագիտական շրջանների մէջ, ուր Մարոկկեան մղձաւանջը արդէն ծանր հոգսեր է պատճառում։ Պարսից կառավարութիւնը եւ արեւմտեան շիտակ մամուլը անմիջապէս պատասխանատու հռչակեցին... Սօլիպիենեան կառավարութիւնը։ Մեհմեդ-Ալին զսնում էր վերջինի հսկողութեան տակ. ցարիզմը պարտաւորւել էր թոյլ չը տալ նրան՝ նոր դաւեր սարքելու սահմանադրական ռէժիմի դէմ. բայց ո՞վ կը հաւատար Պետերբուրգի Մակեավելիների անկեղծութեան, որոնց տենչանքն է՝ վերականգնած տեսնել բռնապետութիւնը հարաւային եւ արեւելեան սահմանների վրայ...

Այսպէս թէ այնպէս, Պարսկաստանը ծանր անցքերի նախօրեակում է եւ ո՞վ գիտէ, ինչ դիւային մեռելապար կարող է առաջ գալ այդ վիթխարի քաոսի մէջ, ուր բացառակ անիշխանութեան նեռ գոռն են տալիս ամենուրեմ աւազակային, աւարառու բնազդներ, ուր ամբողջ երկրի նակատագիրը կախւած է մի Սպենսարից, մի փառատենչ եւ անկարող ավանտիւրիստից, որ ընդունակ է փոխանակել իր նախկին յեղափոխական դափնիները՝ բռնապետական ճանճանոցներով։

Եւ թւում է թէ... ամեն բան նորէն պիտի սկսել։ Նոր նգնաժամ, նոր զալարումներ։ Դրա հետ.. արտաքին միջամտութեան անխուսափելի ուրւականը... Դարձեալ բեմ է նեսւում բախտիարների քաջարի ցեղը՝ ընդդէմ խիզախ բռնակալի։ Տասնեակ հազարաւոր բանակը զնում է արդէն՝ դիմաւորելու Մեհմեդ-Ալիին։ Ի՞նչ կը լինի հետը... Ի՞նչ դիրք կը բռնէ ժողովրդային միլիոնաւոր ընդհանրութիւնը Պարսկաստանի բոլոր ծայրերում Ասրպատականում, եւ... մայրաքաղաք—Թեհրանում։

Եւրոպական մամուլը ծանուցանում է, որ մայրաքաղաքը նորէն յանձնւած է Եփրեմին։ Այդ մարդը, որ մինչեւ օրս փայլում յաղթականներով մղել է ամենաղժուարին, ամենապատասխանատու արտաքինները ու նակատամարտները—նրան յանձնում են այժմեան անեղ նգնաժամի մէջ դարձեալ ամենածանր պատասխանը՝ սպանուել Թեհրանի—նրա հետ եւ կարելի է ասել, երկրի անագին տարածութիւնների — անդորրութիւնը։ Վաղն էլ, անշուշտ, կը կոչեն նրան պատերազմի դաշտ։ Կը կարողանա՞յ մեր քանկագին ընկերը պատասխան տալ զարհուրելի վայրկեանի պահանջներին—այժմ՝ երբ ֆիզիկական ցաւերը ջլատել են նրա օրգանիզմը, երբ նա այլ եւս չունի շարժելու նախկին ուժը։

Նոր, անաւոր փորձութիւն—պարսից դեմոկրատների համար, Հ. Ռ. Դաշնակցութեան համար...

Սարսափելի խաղ է խաղում Մեհմեդ-Ալին, եւ թւում է, թէ այս անգամ նա անդառնալիօրէն զոհ պիտի գնայ իր բնազդային, անասնական յամառութեանը։

ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսեան մի նամակից քաղում ենք հետեւեալը.

«Նովոչերկասսկի դաշտ նորէն յեռանգւեց։ Տեղի կունենայ հաւանօրէն տարւայ վերջին։ Այդ անվերջ ձգձգումների նպատակն է որքան կարելի է երկար փսեցնել հայ կալանաւորներին, որոնք շարունակում են պահւել դժոխային պայմանների մէջ։ Բանտային զոհերի թիւը հասնում է արդէն 10-ի։ Դրանք մահացածներն են։ Կան եւ կենդանի մեռեալներ, կիսացնորւածներ, լուսնոտներ...

«Դատավարութիւնը տեղի կունենայ դռնփակ։ Ոչ մի թղթակից չը պիտի կարողանայ ներս թափանցել։ Քննիչ պատասխանատուների հայտնագործութիւնը սահման չունի։ Ծանձնելով դատավարութիւնը Կառավարիչ Սենատի առանձին խորհրդին՝ ցարի կառավարութիւնը կամենում է արտակարգ հանդիսաւորութիւն տալ «դաշնակցականների» դատին եւ անաբեկել Ռուսահայասանը, Կովկասը։ Սենատոր Վարվարինի նախագահութիւնը դատին՝ գրաւական է համարւում արտակարգ խստութիւնների, դրակոնական դատավճիռների։ Հայկական սեւ-հարիւրակները որ եւ գիտեր երազում են տեսնել բանտարկեալներին՝ կախաղանի վրայ։ Կարծում են, որ կառավարութիւնը «մարդասիրաբար» է վարւում բանտարկեալների հետ։ Եւ չեն իսկ թաքցնում իրենց ցասումը այդ առիթով...

***

Երեւանում, յունիս 18-ին սպանւեց պոլիցիական խուզարկու բաժնի գործակալ Սոլեարով։ Սպանիչներ անյայտացած են։